ԳԼՈԲՈՒՄ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1

Հունվար

2008

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գ Լ Ո Բ Ո Ւ Մ
Վերլուծական տեղեկագիր

Г Л О Б У С
Аналитический бюллетень

№ 1 (29)
Հունվար, 2008թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անվտանգություն և ինստիտուցիոնալ կառույցներ 3

2007թ. ուշադրությունից դուրս մնացած միջազգային
մի շարք զարգացումների շուրջ 5

Неопределенный риск войны: новый доклад по Карабаху
международной кризисной группы 8

ԱՄՆ հարավկովկասյան քաղաքականության
ձևավորումը 1990-ական թթ. 11

Азербайджан наращивает информвойну 14

Ինտերնետում ադրբեջանական կայքէջերի
ավելացման խնդրի շուրջ 16

Концепция сетецентричных войн как
революция в военном деле 19

«Հակամարտության սանդղակ» 23

Ամերիկահայ համայնք. գործողությունների նոր ասպարեզ 28

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ

Քննարկելով հանրապետության նախորդ տարվա ձեռքբերումները՝ վերլուծական հանրությունում առանձնապես կարևորում են «ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն» հիմնարար փաստաթղթի ստեղծումը: 2007-ի վերջին օրերին հաստատվեց նաև «ՀՀ Ռազմական դոկտրինը»: Այսպիսով, կարելի է ամրագրել, որ ներկայումս հանրապետությունում առկա են գործնականում օրենքի ուժ ստացած երկու հայեցակարգեր, որոնք կոչված են ուղենիշ հանդիսանալ Հայաստանի և Հայության անվտանգությունն ապահովող գործառույթներում: Միևնույն ժամանակ, գաղտնիք չէ (և առաջին հերթին այդ փաստաթղթերի ստեղծումը նախաձեռնողների համար), որ ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը և Ռազմական դոկտրինը դեռևս զգալի չափով կրում են հռչակագրային բնույթ և չեն վերածվել հանրապետության արտաքին և ներքին քաղաքականությունը թելադրող իրական մեխանիզմի:

Ժողովրդավարական համակարգից բխող խնդիրներ

Անվտանգության տեսական դրույթները կիրառական հարթություն տեղափոխելու հետ կապված բարդություններն այսօր պայմանավորված են մի շարք գործոններով: Վերլուծաբանական հանրությունը նշում է պետական ապարատի աշխատակազմի ոչ այնքան բարձր տեսական պատրաստվածությունը և այն հանգամանքը, որ մեր նախարարությունների կառուցվածքը սկզբունքորեն հարմարեցված չէ նման բնույթի աշխատանքներ կատարելու համար: Քաղաքական ընտրանու առանձին շրջանակներում այդ առիթով երբեմն կարելի է լսել, թե մեզանում «պետությունը» կամ «իշխանությունը» միատարր հասկացություններ չեն, և որ առանձին պետական գերատեսչություններ ունեն անցանկալի առանձնահատկություններ և ի լրումն՝ ավելորդ անձնավորված են, ինչը չի նպաստում մեր ազգային շահերին ուղղված միասնական քաղաքականության մշակմանը և իրագործմանը:

Անշուշտ, մեր պետական համակարգը համապատասխանեցված է ժողովրդավարությունում ընդունված նորմերին և ստանդարտներին: Այդ համակարգի առանցքային դրույթներից են իշխանության տարբեր թևերի ձևավորումը և դրանց հավասարակշռումը. վերջինս պետք է խոչընդոտի պետությունում մեկ գերակայող ուժի առաջացմանը, ինչը դիտարկվում է որպես հնարավոր բռնատիրության հաստատման նախապայման: Միևնույն ժամանակ, նման համակարգը, իր արժանիքների հետ մեկտեղ, ինչ-որ չափով խոչընդոտում է քաղաքական կամքի կենտրոնի ձևավորմանը և մասամբ սահմանափակում օպերատիվ որոշումներ ընդունելու հնարավորությունները:

Կան որոշակի հայեցակարգային բարդություններ նաև իշխանություն-հասարակություն հարաբերություններում: Մասնավորապես, «միջին խավ» և «քաղաքացիական հասարակություն» հասկացությունները հայ հանրության համար բավական աղոտ և վիճելի են: Առաջինից կարծես թե հետևում է նաև «ցածր» և «բարձր» խավեր ձևավորելու անհրաժեշտությունը: Իր հերթին, «քաղաքացիական հասարակության» վերաբերյալ դրույթը, մասնավորապես, ենթադրում է պետական համակարգում հասարակության «ինքնավարության» բարձր մակարդակ և անգամ «պետությունից անջատ» գործառույթներ: Այս առիթով նկատենք, որ այսօր «պետություն - հասարակություն» կապի նման թուլացումը, համաձայն միջազգային փորձագետների մի ստվար զանգվածի, բնավ չի հանդիսանում հանրության կազմակերպման ամենաօպտիմալ տեսլականը:

Սակայն վերոնշյալ հանգամանքներից բնավ չի հետևում, թե պետության և հասարակության կազմակերպման ժողովրդավարական համակարգը բացառում է ազգային – քաղաքական կամքի կենտրոնի ձևավորումը, առանց որի անհնարին է ուժեղ պետություն և հանրություն ունենալը:

Ներկայիս հզոր երկրների գերակշռող մասն արդեն մի երկար պատմական ժամանակահատված հաջողակ գործում է ժողովրդավարական նորմերի շրջանակներում, իսկ որոշ գերհզոր թվացող ոչ ժողովրդավարական տերություններ փլուզվում են առաջին իսկ ներքին հար-

վածներից: Այս հարցի համալիր քննարկումը, անշուշտ, պահանջում է դիտարկել նաև, այսպես կոչված, «երրորդ ուղի» ընտրած երկրների (Իրան, Իսրայել, Բելառուս և այլն) օրինակը: Սակայն վերադառնանք մեր հիմնախնդիրներին:

Ինստիտուցիոնալ կառույցների մասին

Ժողովրդավարական համակարգում պետության և հանրության տարբեր հատվածների տարանջատման հիմնախնդիրը, որպես կանոն, հարթվում է, այսպես կոչված, ինստիտուցիոնալ կառույցների (ԻԿ) միջոցով, որոնց հիմնական նպատակներից է այդ հատվածներից մի համալիր ամբողջություն ձևավորելը: Այդ համատեքստում կարելի է փաստել, որ մեր հանրապետությունում ԻԿ-ների դերն այսօր այնքան էլ մեծ չէ:

Որպես ավանդական և համահայկական ԻԿ շարունակում է գործել Հայ Առաքելական եկեղեցին (որն իր գործառույթներում պետք է մասամբ ընդգրկի նաև գաղափարախոսական ոլորտը): Արցախյան ազատագրական պայքարի արդյունքում յուրահատուկ ինստիտուցիոնալ դերակատարում է ձեռք բերել Պաշտպանության նախարարությունը. զարմանալի չէ, որ ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության փաստաթուղթը ստեղծվել է հենց ՊՆ-ում: Քաղաքական, ազգային-գաղափարախոսական ոլորտում ԻԿ-ի վերածվելու հնարավորություններ ունեն ՀՀԿ-ն և ՀՅԴ-ն: Հանրությունում որոշակի ոգևորություն է առաջացրել նաև Սփյուռքի խնդիրներով զբաղվող նախարարության ստեղծման մասին իշխանությունների խոստումը, ինչը թույլ կտա լրջորեն զբաղվել համաշխարհային Հայության կազմակերպման և անվտանգության խնդիրներով:

Չպետք է մոռանալ նաև կորուստների մասին, որոնց շարքում առաջինը Գիտությունների ազգային ակադեմիան է. այսօր ԳԱԱ-ն ծանր իրավիճակում է, այն չի կատարում ազգային անվտանգության տեսակետից առավել քան կարևոր գիտատեխնոլոգիական կենտրոնի իր ֆունկցիաները և գլխավորապես փորձում է լուծել սեփական գոյապահպանման խնդիրը:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ վերլուծական հանրությունում գերակայում է այն կարծիքը, թե առանձին ԻԿ-ների դերակատարման բարձրացումը կամ դրանց թվի արհեստական մեծացումը դժվար թե որակապես բարելավի ոչ այնքան բարվոք իրադրությունը պետության և հանրության կազմակերպման ոլորտում: Ոչ պաշտոնական հարցումները պետական և քաղաքական ընտրանու շրջանակներում վկայում են, որ վերոնշյալ խնդիրների լուծումը, թերևս, հնարավոր է միայն այն պարագայում, եթե հանրապետությունում, որպես լիարժեք համակարգող խորհրդատվական-վերլուծական կառույց, սկսի գործել Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ): Փորձագիտական հիմունքներով կազմակերպված նման մարմինը, ինչպես վկայում է միջազգային փորձը, ունի բոլոր հնարավորությունները ոչ միայն իրական հարթությունում կիրառել ազգային անվտանգության ոլորտների (ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և տեղեկատվական) տեսական դրույթները, այլև վերածվել այն առանցքային ինստիտուցիոնալ կառույցին, որը համախմբելով մնացյալ ԻԿ-ները՝ կհաղորդի նրանց գործունեությանը գերարդյունավետ, այսպես կոչված՝ սիներգետիկ բնույթ:

Գագիկ Տեր-Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

2007Թ. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻ ՇԱՐՔ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

«Foreign Policy» ամերիկյան հեղինակավոր վերլուծականը 2007թ. իր վերջին համարի կենտրոնական նյութը նվիրեց անցած տարի տեղ գտած այն տասը կարևոր զարգացումներին և իրադարձություններին, որոնք ինչ-ինչ պատճառներով դուրս մնացին միջազգային լրատվական և վերլուծական հոսքից: Եվ սա այն պարագայում, երբ ուշադրությունից զերծ մնացած մի շարք զարգացումներ կարող են նշանակալի և ազդեցիկ դեր խաղալ միջազգային քաղաքական հետագա իրողություններում: Ստորև հարկ ենք համարում անդրադառնալ ամերիկյան հանդեսի թոփ-տասը իրադարձություններից մի քանիսին:

Միջազգային կիբեռպատերազմների սկիզբը

2007 թվականը կհիշվի որպես իսկական կիբեռպատերազմների սկիզբն ազդարարող տարեթիվ: Հատկանշական է, որ տարվա ընթացքում դրական ձեռքբերումներով համաշխարհային ինտերնետային և ծրագրային ցանցում մղվող պատերազմում աչքի ընկան Ռուսաստանը և Չինաստանը, այն պարագայում, երբ Արևմուտքը հիմնականում քայլեր էր ձեռնարկում ռուսական և չինական դիրքերի կտրուկ ամրապնդումը խափանելու ուղղությամբ: Այսպես, ապրիլի վերջին եվրոպական և ամերիկյան գործակալությունները և կառույցներն անակնկալի եկան, երբ ռուսական հաքերները մի քանի օրվա ընթացքում ամբողջովին ոչնչացրին Էստոնիայի բավական ժամանակակից և զարգացած էլեկտրոնային-տեղեկատվական համակարգը: Մի քանի օրում, որպես հակազդեցություն Տալլինի հակառուսական քաղաքականության, հիմնովին վերացվեցին կամ վերահսկողության տակ առնվեցին էստոնական տեղեկատվական գործակալությունների, նախարարությունների, այդ թվում՝ պաշտպանության և ներքին գործերի, հիմնական ազգային բանկերի և ձեռնարկությունների կայքերը և, ամենակարևորը, ներքին ցանցերը: Վերահսկողության տակ վերցվեցին նաև Էստոնիայի կառավարության և նախագահի էլեկտրոնային կայքերը: Ամենայն հավանականությամբ բարձր մակարդակով կազմակերպված ռուսական հարվածն ուղղորդվում կամ իրականացվում էր Ռուսաստանի անվտանգության ծառայության կողմից:

Երկրորդ խոշոր անակնկալն Արևմուտքը ստացավ հունիսին, երբ պաշտոնական Պենտագոնը հայտարարեց այն մասին, որ չինական ռազմուժի հատուկ ստորաբաժանումը կարողացել է ներգործել ԱՄՆ Պաշտպանության նախարարությյան ներքին ցանցային համակարգի այն մասի վրա, որն օգտագործվում է նախարար Ռ.Գեյթսի խորհրդականների և օգնականների կողմից՝ փաստորեն, մուտք ստանալով կարևորագույն ռազմական նշանակության նյութերին և հաղորդագրություններին: Իսկ տարվա վերջին բրիտանական *MI5* հետախուզությունը հատուկ նամակներ հղեց արևմտյան հետախուզություններին և ռազմական տեխնիկա արտադրող ընկերություններին այն մասին, որ Լոնդոնը ֆիքսել է չինական ռազմական հետախուզության ցանցային հարվածներն այս կառույցների ցանցերին և ստորաբաժանումների տեղեկատվական բազաներին:

Վերը նշված զարգացումներում ԱՄՆ դիրքերի ապահովման համար սեպտեմբերին ԱՄՆ ռազմաօդային ուժերի ղեկավարությունը որոշում է ընդունել ստեղծել նոր «Կիբեռտարածքային ղեկավարություն» *(Cyberspace Command),* որի աշխատանքներին պետք է ներգրավվեն 500 առաջատար մասնագետ-ծրագրավորողներ: Ստորաբաժանման ձևավորումը կավարտվի 2009-ին, այն կդառնա իր տեսակի մեջ խոշորագույն կառույցն աշխարհում, որի հիմնական գործառույթը պետք է լինի Չինաստանի և Ռուսաստանի դիրքերի ակտիվացման խափանումը:

Ամերիկյան ռազմածովային կայանի ստեղծումը Իրաքում

Չնայած 2007 թվականն անցավ ԱՄՆ ներքաղաքական կյանքում Իրաքից ամերիկյան ռազմուժի դուրսբերման անհրաժեշտության մասին քննարկումների ակտիվացմամբ, նույն 2007-ին Պենտագոնը մի կարևոր քայլ կատարեց Իրաքում ամերիկյան ռազմական ներկայության երկարաժամկետ պահպանման ուղղությամբ: Նոյեմբերին ամերիկյան ռազմական նավատորմի ղեկավարությունը սակավ լրատվական լուսաբանմամբ Պարսից ծոցի իրաքյան հատվածում, Խոր ալ Ամայա նավթային խոշորագույն տերմինալի հարևանությամբ իրականացրեց նոր ռազմածովային կայանի պաշտոնական բացումը: Խոր ալ Ամայա և դրան բավական մոտ գտնվող Բասրա նավթային տերմինալները կարևորագույն նշանակություն ունեն համաշխարհային նավթային շուկայում: Կարելի է գոնե նշել այն, որ այս երկու տերմինալները կարող են ապահովել համաշխարհային նավթի 10%-ի բարձումն ու արտահանումը: Ավելացնենք, որ անցած տարի իրաքյան նավթը կտրուկ ամրապնդեց դիրքերը ԱՄՆ ներքին շուկայում. Իրաքը ԱՄՆ նավթ արտահանող երկրների ցուցակում 2007-ին 11-րդից բարձրացավ 6-րդ տեղը՝ զիջելով միայն Կանադային, Մեքսիկային, Վենեսուելային, Նիգերիային և Սաուդյան Արաբիային: Միևնույն ժամանակ, վերջին շրջանում ամերիկյան վերլուծություններում կարծիք է հայտնվում, որ իրաքյան նավթի միջոցով պետք է նվազեցվի ԱՄՆ կախվածությունը վենեսուելական նավթից, ինչի արդյունքում Իրաքի և Վենեսուելայի դիրքերը ԱՄՆ նավթ ներկրող պետությունների ցուցակում կարող է փոխվել:

Խոր ալ Ամայայի ռազմակայանը, երբ ստեղծվի և բավարար չափով ամրապնդվի, ըստ պաշտոնական Պենտագոնի, պետք է հանձնվի իրաքյան նավատորմին: Այս առիթով «*Wall Street Journal*» պարբերականը նշում է, որ իրաքյան նավատորմի ստեղծման հեռանկարը շատ մշուշոտ է, քանի որ ամերիկյան ծովայինները ներկայումս իրաքցիներին սովորեցնում են փրկարար միջոցներից օգտվելու կարգը: Իսկ «*Foreign Policy*»-ն նշում է, որ եթե կապ կա Իրաքից ամերիկյան ծովայինների հեռացման և իրաքյան նավատորմի ստեղծման միջև, ապա իրականում ամերիկյան ռազմական ուժերը այնքան երկար կմնան Իրաքում, որ ոչ ոք պատկերացնել անգամ չի կարող:

Ակնհայտ է նաև, որ ամերիկյան ռազմակայանի ստեղծումն Իրաքում նպատակ ունի ռազմական և ռազմավարական տեսանկյունից ամրապնդել Վաշինգտոնի դիրքերը Թեհրանի հետ հակամարտությունում: Այդ հակամարտության նոր փուլ կարող է սկսվել ԱՄՆ-ում և Իրանում սպասվող նախագահական ընտրություններից հետո, որոնք կկայանան, համապատասխանաբար, 2008 և 2009թթ.: Իրանի դիրքերը Պարսից ծոցում ակնհայտորեն տուժում են ամերիկյան ռազմակայանի ստեղծումից հետո, քանի որ իրաքյան այս ռազմակայանը կտրուկ նվազեցնում է իրանական նավատորմի՝ Հորմուզի նեղուցի նկատմամբ ունեցած համեմատական վերահսկողության նշանակությունը: Նաև ամերիկյան ռազմածովային ուժերի ակտիվացմամբ են, հավանաբար, պայմանավորված իրանական և ամերիկյան ռազմածովային ուժերի միջև առաջացած ընդհարումները, որոնցից ամենաակներևն է 2008-ի հունվարի սկզբին իրանական նավերի կողմից հրահրված ընդհարումն ամերիկյան նավերի հետ:

ԱՄՆ «իսրայելական լոբբիի» դիրքերի թուլացումը

2007թ. սեպտեմբերի սկզբին ամերիկյան առաջատար գրախանութները հեղեղվեցին Ս.Վոլթի և Ջ.Միրշեյմերի «*Իսրայելական լոբբի*» գրքով, որը վաճառքի աննախադեպ բարձր ցուցանիշներ արձանագրեց: Հեղինակներն իրենց գրքում կարծիք էին հայտնում, որ Իսրայելի աջակիցները հսկայական ազդեցություն ունեն ամերիկյան քաղաքական դաշտում և իրենց հայեցողությամբ կարողանում են ուղղորդել Վաշինգտոնի արտաքին քաղաքականությունը Թել Ավիվին ձեռնտու ուղղությամբ: Հեղինակներն այս իրողությունը ներկայացնում են որպես սպառնալիք ԱՄՆ անվտանգությանը: Գրքի հրատարակումից մեկ շաբաթ հետո լույս տեսավ մի նոր հետազոտություն, որը նվիրված էր Իսրայելի նպատմամբ ամերիկյան հրեաների հայացքների փոփոխությանը: Հետազոտության համահեղինակներ Ս.Քոհենը *Hebrew Union College*-ից և Ա.Քելմանը *University of California, Davis*-ից նախաբանում նշում են. «Փոխկա-

պակցման զգացումը կարող է փոխվել, քանի որ ջերմությունը (բարեկեցությունը) ճանապարհ է տալիս անտարբերությանը, իսկ անտարբերությունը ճանապարհ է տալիս իրական օտարացմանը»: Այսպես, 1704 ոչ օրթոդոքս և մինչև 35 տարեկան ամերիկյան հրեաների մոտեցումների հետազոտությունը ցույց է տալիս, որ նրանց միայն 48%-ը Իսրայել պետության ոչնչացումը կդիտարկի որպես «անձնական ողբերգություն»: Միևնույն ժամանակ, հարցվածների ընդամենը 54%-ն է ասում, որ իրեն լավ է զգում՝ գիտակցելով, որ երկրագնդի վրա կա հրեական պետություն:

Նշենք նաև, որ ԱՄՆ-ում բավական շատ են նաև այն հրեաները, որոնք հանդես են գալիս Իսրայելի վերացման անհրաժեշտության օգտին: Այստեղ կարելի է հիշել առաջին հերթին Ահարոն Ռուսոյի՝ 2006թ. Ա.Ջոնսին տված հայտնի հարցազրույցը, որում նա նշել էր ոչ միայն իր նախկին ընկեր Ն.Ռոկֆելերի՝ սեպտեմբերի 11-ից մոտ մեկ տարի առաջ իրեն հայտնած կարծիքը, թե Մերձավոր Արևելքում անհրաժեշտ է հաստատել ամերիկյան ռազմական գերիշխանություն և դրա համար ուղղակի լավ «առիթ» է պետք, այլ նաև առաջարկել էր կազմաքանդել Իսրայելը և ստեղծել հրեական պետություն ԱՄՆ Արիզոնայի նահանգում:

Հետևություններ

Չնայած ամերիկյան «*Foreign Policy*» ամսագիրն այս իրադարձությունները ներառել է չլուսաբանված զարգացումների շարքում, դրանք բոլորն այսպես թե այնպես առնչվում են անցած տարվա ընթացքում տեղ գտած միջազգային զարգացումներին: Ակնհայտ է, որ Հայաստանը և Հայությունն իրենց վրա կկրեն այս զարգացումների ազդեցությունը: Լինեն դրանք կիբեռպատերազմների սկիզբը Հարավային Կովկասում ընթացող ռուս-ամերիկյան հակազդեցությունում, Իրաքում և Պարսից ծոցում ամերիկյան ռազմական ներկայության բարձր կազմակերպումը և ինստիտուցիոնալացումը, թե ԱՄՆ հրեական համայնքում տեղ գտած ձևափոխումները: Վերջինս ԱՄՆ հայության կյանքում ընթացող կամ հնարավոր փոփոխությունների համեմատական ուսումնասիրության համար բավական լուրջ առիթ և մտահոգություններ է ստեղծում:

Սնակ Սարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ

НЕОПРЕДЕЛЕННЫЙ РИСК ВОЙНЫ: НОВЫЙ ДОКЛАД ПО КАРАБАХУ МЕЖДУНАРОДНОЙ КРИЗИСНОЙ ГРУППЫ

14 ноября 2007г. был опубликован новый (уже третий по счету) доклад Международной кризисной группы *(ICG)*, посвященный проблемам поиска путей урегулирования карабахского конфликта и оценки вероятности возобновления боевых действий в зоне армяно-азербайджанского противостояния. Доклад называется «Нагорный Карабах: рискуя войной». Учитывая небывалый интерес общественности конфликтующих сторон к предыдущим двум докладам *ICG* (опубликованным осенью 2005г. и ставшими основой рекомендаций Минской группы президентам Армении и Азербайджана во время переговоров в Рамбуйе и Бухаресте), целесообразно проанализировать нынешний документ с точки зрения динамики оценок западных экспертов по карабахской проблеме.

В частности, представляет большой интерес выдвигаемый авторами доклада тезис о проблематичности дальнейшего бурного увеличения нефтяных доходов Азербайджана после 2012г., что связано с исчерпанием основных разведанных запасов нефти и газа в азербайджанском секторе Каспийского моря, и переходом их в стадию так называемой «падающей добычи». Данный анализ сделан на основе выводов авторитетных международных экспертов, в том числе работающих на известную британскую нефтяную компанию *British Petroleum (BP)*. Кроме этого, указывается значительный уровень коррумпированности и сложности перераспределения нефтяных доходов в Азербайджане, а также на четкие симптомы т.н. «голландской болезни», проявляющейся в этой стране, и связанного с этим глубокого кризиса ненефтяного сектора азербайджанской экономики. При всем этом чрезвычайно капиталоемкая отрасль нефтяной промышленности Азербайджана обеспечивает лишь незначительную занятость населения – в ней работает всего около 76 тыс. азербайджанцев, тогда как общая численность трудоспособного населения страны насчитывает (по официальной статистике) более 4 миллионов человек.

Как отмечают авторы в этом разделе документа, довольно образно озаглавленном «Нефтяное проклятие Азербайджана» и анализирующем роль каспийских углеводородных запасов на экономическое развитие этой страны: «Ненефтяной бюджет государства в настоящее время дефицитен. Приблизительно 70% расходов прямо или косвенно финансируются за счет продажи нефти». Хотя к 2012г. у Азербайджана, видимо, сохранится возможность получать платежи за транзит газа и нефти по трубопроводам из Центральной Азии, но это не возместит потерь азербайджанской экономики от снижения добычи собственной нефти. Как оценивают эксперты Международного валютного фонда, доходы от продажи нефти в 2009г. достигнут максимума в 46% ВВП и снизятся к 2012г. до 32,6%, что в номинальном выражении составило бы примерно $20,5 млрд в 2009г. и $17,8 млрд в 2012г. Поэтому при условии, что комплексные доходы от нефти будут оставаться практически единственным источником бюджетных расходов Азербайджана, к 2012г., когда прогнозируется начало спада добычи нефти, в этой стране может начаться масштабный экономический кризис: «Когда начнут снижаться доходы от продажи нефти, то же произойдет с реальным ростом ВВП. Сальдо ненефтяных доходов и расходов бюджета достигнет дефицита в приблизительно 60% в 2011г. и 65% в 2012г. К 2012г., только через два года после пиковых доходов, вероятно, потребуются активы нефтяного фонда для восстановления дефицита бюджета в 5,4% ВВП. С учетом некомпетентного руководства экономикой и коррупции, Азербайджан может оказаться в трудной ситуации менее чем через восемь лет».

В части, касающейся сложившегося в зоне противостояния военного баланса, международные эксперты указывают, что, несмотря на довольно значительные закупки Азербайджаном

в последние годы большого количества танков Т-72, боевых самолетов Миг-29 и Су-25, а также тяжелой артиллерии и РСЗО «Смерч», тем не менее, баланс в боеспособности вооруженных сил сторон в целом не изменился и вряд ли может измениться в ближайшее время, что во многом также обусловлено выгодной для армянской стороны географической конфигурацией нынешней линии фронта в Нагорном Карабахе, где значительная часть господствующих высот находится под контролем армянской стороны, а наиболее уязвимые участки соприкосновения с азербайджанскими войсками представляют собой глубоко эшелонированную линию долговременных и полевых фортификационных укреплений. В сохранении военного баланса играет свою роль также фактор продолжающегося армяно-российского военного сотрудничества, членство Армении в ОДКБ и льготный для Еревана порядок закупки вооружений и военной техники в России.

Но при всем этом надо отметить значительные различия между самим текстом и политическими выводами и рекомендациями, сделанными авторами доклада. По существу, выводы повторяют основные положения предыдущего доклада *ICG* «Нагорный Карабах: план установления мира» от 11 октября 2005г. о необходимости скорейшего заключения мирного соглашения по Нагорному Карабаху, угрожая сторонам в противном случае угрозой возможности развязывания Азербайджаном военных действий. Однако в нынешнем докладе делается аналогичный вывод на основе уже прямо противоположных тезисов. В выводах доклада *ICG* от 2005г. говорилось о необходимости заключения мира, т.к. в силу полученных Азербайджаном высоких нефтяных доходов и закупок им большого количества вооружений у Баку может возникнуть искушение начать боевые действия. Тогда как в нынешнем докладе 2007г. прямо говорится, что то же самое может произойти, если «около 2012г., после которого доходы Азербайджана от продажи нефти, как ожидается, начнут снижаться, у него может появиться соблазн решить конфликт силой», начав войну против Армении, «которая, вопреки ожиданиям, неплохо развивается с экономической точки зрения, также стала проявлять больше упорства и повысила свои военные расходы». В докладе указывается, что «когда доходы от экспорта нефти Азербайджана, вероятно, начнут снижаться, и военная авантюра может представиться средством отвлечения внимания граждан страны от экономических проблем» (буквально цитируются выдержки из текста документа).

Т.е. получается, что, не добившись уступок в первую очередь от армянских сторон, на позиции которых не повлиял «нефтяной шантаж» и заявления о якобы скором нарушение Азербайджаном сложившегося военного баланса, авторы доклада ICG призывают стороны прийти к соглашению, но на этот раз исходя уже из опасности экономического кризиса в самом Азербайджане после 2012г., когда экономически и социально ослабленная азербайджанская сторона якобы попробует напасть на экономически стабильно развивающиеся Армению и Нагорной Карабах. Иными словами выходит, что главным «логическим» выводом этого Доклада является мысль о том, что если стороны не достигнут мира, то после 2012г. теперь уже «бедный» Азербайджан начнет войну против «богатых» Армении и Нагорного Карабаха!

Это явное логическое несоответствие между основным текстом документа (из которого в реальности следует прямо противоположный вывод – нефтяные доходы Азербайджана резко спадут после 2012г. и к этому времени он просто не сумеет достичь настолько подавляющего превосходства в гонке вооружений, чтобы быть уверенным в благоприятном для Баку исходе возможных боевых действий) и его заключительными выводами свидетельствует о том, что авторы просто выполняли политический заказ влиятельных американских и европейских кругов, стремящихся по возможности достичь определенного урегулирования и стабильности вдоль маршрута масштабных региональных энергетических и коммуникационных проектов на Южном Кавказе.

Однако профессионализм авторов, тем не менее, не позволил им не заметить реальные и объективные факты при анализе ситуации, что и получило свое отражение в основной части

Доклада, касающейся проблем с нефтяными доходами Азербайджана после 2012г. и его реальных способностей изменить военно-политический баланс в зоне карабахского конфликта. С этой же точки зрения следует рассматривать более подробное освещение в тексте инициативы проведения в Карабахе (и/или по Карабаху) дополнительного референдума как своеобразной попытки легитимизировать сам факт отделения Нагорного Карабаха от Азербайджана, чему в тексте доклада отведено довольно существенное место.

Резюмируя вышеуказанное, вместе с тем надо подчеркнуть, что данные рекомендации не являются ни определенным рецептом решения карабахского вопроса на нынешнем этапе, ни «завуалированным» предложением для ознакомления сторон с выдвигаемыми международными экспертами. Хотя, конечно же, предыдущие рекомендации ICG использовались Минской группой ОБСЕ как для выработки предложений, так и для своеобразного «неформального освещения и информирования» о деталях возможного компромисса общественности и политической элиты Армении, Азербайджана и Нагорного Карабаха. Однако последний доклад Международной Кризисной Группы иллюстрирует некоторое изменение взглядов и подходов западного экспертно-аналитического сообщества, в частности в более критических оценках реальности «нефтяного» и военного шантажа со стороны Азербайджана в карабахском вопросе.

Сергей Минасян

ԱՄՆ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 1990-ԱԿԱՆ ԹԹ.

ԱՄՆ-ը, ԽՍՀՄ քայքայումից հետո ներքաշված լինելով Հարավային Կովկասում, Կասպից ծովի ավազանում և Կենտրոնական Ասիայում տեղի ունեցող իրադարձություններում, 1990-ականների սկզբին ավելի շատ կարևորում էր իր դաշնակիցների՝ Թուրքիայի, Իսրայելի և Պակիստանի գործունեությունը՝ իրեն վերապահելով միայն վերջիններիս աջակցողի դերակատարումը: ԱՄՆ-ը, կարելի է ասել, տարածաշրջանի ռազմաքաղաքական կարևորությունը գիտակցեց ավելի ուշ՝ 90-ական թթ. երկրորդ կեսին, երբ ամերիկացի մի քանի հայտնի քաղաքական գործիչներ և վերլուծաբաններ՝ Զբիգնև Բժեզինսկին, Հենրի Քիսինջերը, Ռիչարդ Չեյնին, Փոլ Վուլֆովիցը, Հովարդ Բեյքերը, Լյուիս Լիբին և ուրիշներ, հանդես եկան Սպիտակ տան քաղաքականության կտրուկ քննադատությամբ՝ պահանջելով ԱՄՆ ակտիվացումը[1]:

Ըստ որոշ վերլուծաբանների՝ 90-ական թթ. առաջին կեսին վերը նշված տարածաշրջաններում ԱՄՆ-ին հիմնականում հետաքրքրում էին հետևյալ խնդիրները. Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի նոր երկրների ինքնիշխանության ամրապնդումը, քաղաքական կայունության հաստատումը հակամարտությունների գոտիներում, ժողովրդավարացման գործընթացը, շուկայական տնտեսության և ազատ առևտրի զարգացումը, Ղազախստանի միջուկազերծումը (այդ շրջանում Ղազախստանը դեռ ուներ միջուկային զենք), նորանկախ պետություններում մարդու իրավունքների հիմնարար սկզբունքների հաստատումը և, վերջապես, Իրանից իսլամական ծայրահեղության տարածման կանխումը[2]: Այսպիսով, այդ շրջանում պաշտոնական Վաշինգտոնը կարևորում էր այս հարցերի շուրջ ընդհանուր քաղաքական սկզբունքների ընդունումը և վարում էր միջնորդավորված քաղաքականություն՝ կարևորելով հատկապես իրանական ազդեցության դեմ պայքարը[3]: Սպիտակ տան ուշադրությունը կենտրոնացած էր Ռուսաստանի վրա՝ հետին պլան մղելով նախկին Խորհրդային Միության հարավային այն շրջաններում ծավալվող իրադարձությունները, որոնք ամերիկյան վերլուծաբանները շատ հաճախ անվանում էին «Ռուսաստանի հետնաբակ»:

Քլինթոնի վարչակազմը կարծում էր, թե իր քաղաքականությունն այդ «հետնաբակում» պետք է լինի շատ զգույշ Ռուսաստանում ազգայնական և կոմունիստական ուժերի ակտիվացումը չխրախուսելու համար: «Սպիտակ տունն ամեն կերպ աջակցում էր Ելցինի վարչակազմին, այսպիսով քլինթոնյան վարչակազմը Մոսկվային ազատ գործելու հնարավորություն էր տալիս»: Այսինքն, ըստ որոշ ամերիկյան վերլուծաբանների՝ Սպիտակ տան համար կարևոր էր քաղաքական կայունության և ժողովրդավարության հաստատումը Ռուսաստանում, ինչը նրան ստիպում էր շատ ավելի զգույշ լինել այդ երկրի համար կենսական նշանակություն ունեցող շրջաններում: Այդ ժամանակաշրջանում ԱՄՆ «ռուսական քաղաքականությունը» գնահատվում էր որպես հակասական, քանի որ Սպիտակ տունը, մի կողմից, խրախուսում էր ելցինյան իշխանության քաղաքականությունը երկրի ներսում (ըստ Սպիտակ տան՝ դա էր Ռուսաստանում ժողովրդավարության պահպանման միակ գրավականը), մյուս կողմից՝ չէր կարող դուրս մնալ Ռուսաստանի «հետնաբակում», հատկապես՝ Կասպից ծովի շուրջ հասունացող նավթային նոր լարվածությունից:

Քլինթոնի վարչակազմը ելքը տեսնում էր տարածաշրջանում իր ռազմավարական դաշնակից Թուրքիայի դերի ակտիվացման մեջ: Վաշինգտոնը նաև կարծում էր, թե Հարավային

---

[1] *Рашид А.,* Талибан: Ислам, нефть, и новая Большая игра в Центральной Азии, часть 2-ая 08.01.2005 http://centrasia.org/newsA.php4?st=1105151280

[2] *R.Hrair Dokmejian & Hovann H.Simonian,*Troubled Waters.The Geopolitics of The Caspian Region, New York, 2001, p. 132.

[3] *Bremmer Ian,* Oil Politics: America and the Riches of the Caspian Basin, World Policy Journal, vol 15, #1, Spring, 1998.

Կովկասի և Կենտրոնական Ասիայի շատ երկրների համար թուրքական պետական մոդելը կարող է օրինակ դառնալ զարգացման սեփական ուղին գտնելու հարցում: Իսկ ըստ ամերիկյան որոշ շրջանակների՝ Թուրքիայի քաղաքական մոդելն իր մահմեդական բնակչությամբ և քաղաքական կառավարման արևմտյան ձևով, որպես չափանիշ, լավագույնս համապատասխանում է Կենտրոնական Ասիայի երկրների և Ադրբեջանի համար: Տարածաշրջանում ամերիկյան շահերի համար սպառնալիք էր դիտարկվում ոչ թե Ռուսաստանը, այլ Իրանի Իսլամական Հանրապետությունը: Արդյունքում՝ էլ ավելի էր խստացվում այդ երկրի դեմ տարվող քաղաքականությունը: 1996թ. ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց «Իրան-Լիբիա պատժամիջոցների ակտ» *(Iran-Libya Sanctions Act (ILSA)* կոչվող օրենքի բանաձևը, որով սահմանափակվում էր այդ երկրներում արտասահմանյան կազմակերպությունների ներդրումների հնարավորությունը, և պատժամիջոցներ էին սահմանվում այս օրենքը խախտել փորձողների համար: Օրենքում հատուկ նշվում էր, որ Իրանի էներգետիկայի բնագավառում $20 մլն-ից ավելի ներդրումներ կատարող ընկերությունների և արտասահմանյան բանկերի դեմ կկիրառվեն խիստ պատժամիջոցներ:

Այսպիսով, 90-ական թթ. Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում իր դաշնակիցների միջնորդությամբ քաղաքականություն վարող ԱՄՆ-ը որպես հիմնական մրցակից էր դիտարկում ոչ թե Ռուսաստանը, այլ ԻԻՀ-ն՝ փորձելով ամեն կերպ նվազեցնել վերջինիս ազդեցությունը նշված տարածաշրջաններում: 1994թ. հունվարին Բորիս Ելցինի հետ հանդիպումից հետո Բիլ Քլինթոնը հայտարարեց, որ վրաստանյան քաղաքական ճգնաժամում Ռուսաստանը կարող է կայունացնող դեր կատարել: Նա մասնավորապես նշել էր. «Դուք (Ռուսաստանը- *Մ.Ա)* պետք է ավելի ներգրավված լինեք այն տարածաշրջանների քաղաքականության մեջ, որոնք մոտ են գտնվում ձեզ, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ն էր ներգրավված Պանամայում և Գրենադայում տեղի ունեցող իրադարձություններում»:

Ռուս-ամերիկյան հարաբերությունների այս շրջանը կարող ենք կոչել հարաբերությունների «մեղրամիս», որը, սակայն, երկար չշարունակվեց: Արդեն այդ օրերին պարզորոշ նկատվում էին նաև երկու երկրների հարաբերություններում առկա հակասությունները: Ամերիկացի հայտնի քաղաքագետ Յան Բրեմերը ԱՄՆ այդ շրջանի քաղաքականությունը գնահատում է «անորոշ»՝ կարծելով, որ Վաշինգտոնը չուներ հստակ պատկերացում տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների մասին, և վերջնականորեն չէին ձևավորվել ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունները: Ամերիկացի շատ մասնագետներ հակված են 1991-1994թթ. ռուս-ամերիկյան հարաբերությունները ներկայացնել այնպես, իբր Վաշինգտոնն ամեն ինչ անում էր՝ աջակցելու համար ելցինյան Ռուսաստանին՝ չկատարելով և ոչ մի քայլ, որը կվնասեր գործող վարչակազմի հեղինակությանը: Սակայն 90-ական թթ. կեսերին սկսեցին փոփոխություններ նկատվել ռուս-ամերիկյան հարաբերություններում, և Վաշինգտոնից արդեն ավելի հաճախակի էին լսվում քննադատական խոսքեր Մոսկվայի թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության հասցեին:

Համագործակցությունից մրցակցություն.- 1994թ. պաշտոնական այցով Վաշինգտոնում գտնվելու ժամանակ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևն առաջարկեց կառուցել նոր նավթամուղ, ինչը հնարավորություն կտար ղազախական նավթը, Ռուսաստանը շրջանցելով, արտահանել Արևմուտք: Սակայն այդ առաջարկը չստացավ Քլինթոնի վարչակազմի աջակցությունը. Նազարբաևին խորհուրդ տրվեց այն կառուցել՝ չշրջանցելով ռուսական տարածքը: Սակայն Կասպյան տարածաշրջանից Ռուսաստանը շրջանցող նավթամուղի կառուցման հարցը, կարելի է ասել, արդեն հասունանում էր: Մեկ տարի անց՝ 1995թ., ամերիկյան մի քանի նավթային խոշոր ընկերություններ ստեղծեցին մասնավոր մի կառույց, որը պետք է պաշտպաներ իրենց շահերը Կասպյան տարածաշրջանում:

Ամերիկյան նավթային ընկերությունները, որոնք առաջին քայլերն էին կատարում նավթով հարուստ այս տարածաշրջանում, ԱՄՆ պետքարտուղարությունից ավելի էին հետաքրքրված տարածաշրջանով: Բացի այդ, Վաշինգտոնում մտահոգված էին ԻԻՀ տարածքով նոր նավթամուղի կառուցման հեռանկարով, հետևաբար՝ էլ ավելի մեծ ուշադրություն էին դարձնում այն պահանջներին, որոնք ներկայացնում էին նավթային ընկերությունները: Եվ այսպես, ամերիկյան նավթային ընկերությունները ստեղծեցին «լոբբիստական» մի կառույց, որը պետք է իր քաղաքական ու տնտեսական շահերը պաշտպաներ ոչ միայն և ոչ այնքան Կասպիցի ավազանում, որքան Վաշինգտոնում: Ամերիկյան նավթային հսկա *Unocal* ընկերության գլխավորու-

թյամբ ստեղծված կառույցում ընդգրկվեցին Ջորջ Բուշ-ավագի և Ջիմի Քարթերի ժամանակաշրջանի հայտնի քաղաքական գործիչներ, նախկին պետքարտուղարներ Լոուրենս Իգլբերգերը և Հենրի Քիսինջերը, Ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական Զբիգնև Բժեզինսկին, նախկին սենատոր Հովարդ Բեյքերը, ԱՄՆ բանակի Գլխավոր շտաբի նախկին ղեկավար Ջոն Սունունը և պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Ռիչարդ Արմիթեջը: Քաղաքական այս գործիչներն էլ պետք է նպաստեին Հարավային Կովկասում, Կասպից ծովի ավազանում, Կենտրոնական Ասիայում ամերիկյան նավթային ընկերությունների քաղաքականության առաջմղմանը և ապահովեին Սպիտակ տան գործող վարչակազմի աջակցությունը: 1995թ. ԱՄՆ-ում լոբբիստական այս կառույցի ստեղծումը պատահական չէր: Ռուս-ամերիկյան հարաբերություններում արդեն տիրում էր որոշակի սառնություն. պաշտոնական Վաշինգտոնի՝ Կրեմլին միանշանակ պաշտպանելու քաղաքականությունից հրաժարում էր նկատվում:

Սպիտակ տան քաղաքականության փոփոխության առաջին արձագանքը եղավ 1993թ. հոկտեմբերին, երբ ԱՄՆ պետքարտուղարության հատուկ հարցերով հանձնակատար Սթրոուբ Թելբոթը քննադատեց Ռուսաստանին՝ հայտարարելով, որ «ԱՄՆ-ը չի կարող աջակցել (Ռուսաստանի- *Մ.Ա)* այն գործողություններին, որոնք խարխլում են սուվերեն այլ երկրների ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը»: Հայտարարությունը կատարվեց աբխազական պատերազմի ժամանակ, երբ Ռուսաստանն ակտիվորեն միջամտում էր այդ գործողություններին: Կողմերի հարաբերություններում սառնությունն սկսվել էր դեռ այն ժամանակ (1993թ. աշնանը), երբ Կրեմլը գնդակոծեց Պետդումայի շենքը, ապա ուժով ցրեց այն: Վաշինգտոնում արդեն խոսում էին, որ Ռուսաստանում հետընթաց է տեղի ունենում ժողովրդավարությունից և այնտեղ հաստատվում է ավտորիտար համակարգ: Պարզ էր, որ այս պայմաններում ԱՄՆ-ում ուժեղանում էր նրանց ձայնը, ովքեր պահանջում էին, որ Վաշինգտոնն ակտիվացնի քաղաքականությունը նախկին ԽՍՀՄ «հարավային հանրապետություններում»:

Այս հենքի վրա էլ սկսեց գործել ամերիկյան նավթային ընկերությունների շահերը պաշտպանող լոբբիստական կազմակերպությունը: Խումբը հանդիպեց ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի էներգետիկ հարցերով փորձագետ Շեյլի Հեսլինի հետ: Վերջինս տարածաշրջանում, հատկապես էներգետիկ պաշարներով հարուստ շրջաններում, ԱՄՆ քաղաքականության ակտիվացման կողմնակից էր: Հետագայում ծրագրի կողմնակիցները հանդիպեցին ԱՄՆ նախագահ Քլինթոնի Ազգային անվտանգության հարցերով խորհրդական Սամուել Բերգերի հետ: Մինչ այդ արդեն Քլինթոնի վարչակազմում պետքարտուղարի տեղակալ Սթրոուբ Թելբոթի գլխավորությամբ ստեղծվել էր հատուկ խումբ, որը ներառում էր մասնագետներ առևտրի և էներգետիկայի նախարարություններից, Ազգային անվտանգության խորհրդից և ԿՀՎ-ից: Այսինքն՝ ստեղծվել էր մի իրավիճակ, երբ տարածաշրջանի նկատմամբ քաղաքականության փոփոխության անհրաժեշտության հարցը հասունացել էր ոչ միայն ԱՄՆ նավթային ընկերությունների շահերը պաշտպանող քաղաքական ուժերի, այլ նաև վարչակազմի շրջանում: Վերջիններիս հատկապես մտահոգում էր այն փաստը, որ տարածաշրջանում ազդեցությունն է փորձում ուժեղացնել Իրանը, և Կասպից ծովից հնարավոր նոր նավթամուղի հարցում քննարկվում է իրանական ուղղությունը: Տարբերակ, որին կտրականապես դեմ էր Սպիտակ տունը: Եվ Սթրոուբ Թելբոթի գլխավորությամբ ստեղծված խումբը, առաջին հերթին, պետք է կանխեր իրանական ուղղությամբ հնարավոր խողովակաշարի կառուցման ցանկացած հեռանկարի քննարկումն անգամ: Ելնելով իր քաղաքական շահերից՝ Սպիտակ տունն արդեն արծարծում էր այն գաղափարը, որ Կասպից ծովից սկիզբ առնող ցանկացած նավթամուղ պետք է շրջանցի ոչ միայն Իրանը, այլ նաև Ռուսաստանը: Այսինքն՝ Կասպյան և Հարավկովկասյան տարածաշրջաններում ռուսական ակտիվությանը հանդուրժողաբար նայող Վաշինգտոնն արմատապես փոխում էր դիրքորոշումը նաև պաշտոնական Մոսկվայի նկատմամբ:

Այս պայմաններում, 1990-ական թթ. կեսերին, ԱՄՆ այն ժամանակվա վարչակազմում վերջնականապես ձևավորվեց այն հաստատուն կարծիքը, որ տարածաշրջանում իր հիմնական դաշնակիցը՝ Թուրքիան, պետք է ոչ միայն ակտիվ քաղաքականություն վարի այստեղ, այլև հենց նրա տարածքով պետք է անցնի Կասպից ծովի ադրբեջանական ափից սկիզբ առնող նոր նավթամուղը:

Արմեն Մանվելյան

АЗЕРБАЙДЖАН НАРАЩИВАЕТ ИНФОРМВОЙНУ

В Азербайджане продолжают активно работать в направлении информационной войны против Армении и Нагорного Карабаха с использованием интернета. Не так давно азербайджанцы ввели в действие информационный сайт на армянском языке. Сетевое вещание на языке врага имеет, в принципе, свое воздействие, однако количество затраченных финансовых и человеческих ресурсов в данном случае никоим образом не оправдывает себя.

Однако теперь используются и методы более скрытого характера, в частности – создание псевдоресурсов под армянским флагом, в действительности находящихся под контролем азербайджанцев. Таковым является так называемый информационный портал Хроника (www.xronika.com).

Для продвижения этого ресурса использовалась двухходовая операция. В августе информационные ресурсы Азербайджана пустили волну сообщений о том, что армянские хакеры атаковали азербайджанский сайт Центра экономического и социального развития (ЦЭСР) www.cesd.az. Сообщалось, что якобы хакеры после взлома сайта организации заменили его армянским сайтом www.xronika.com. Псевдоатака якобы была быстро отражена, а сайт восстановлен.

ЦЭСР распространил информацию о том, что их сайт был атакован, якобы, в связи с тем, что организация ведет активную пропагандистскую работу. В качестве довода приводился доклад председателя правления этой организации Вугара Байрамова о том, что если Азербайджану нужно для того, чтобы выйти на нынешний европейский уровень 20 лет, то Армении – 50. И, кроме того, ЦЭСР объявил в различных международных структурах, что до справедливого разрешения карабахского конфликта не присоединится ни к одному мероприятию с участием армянских организаций.

Конечно же, доводы ЦЭСР весьма примитивны. Кроме того, известно, что за прошедшие 2-3 года с армянской стороны не было серьезных атак против азербайджанской стороны, а те, что были, предпринимались в ответ на нападения с азербайджанских хакеров.

Однако факт, что посредством этого вброса сайт *xronika.com* был отмечен как армянский. В принципе, с первого взгляда невозможно точно определить – кому принадлежит данный ресурс. Домен *XRONIKA.COM* зарегистрирован в конце мая этого года в Москве на нейтральное русское имя.

Прокололись азербайджанцы на другом. Ошибкой явилось использование уже засвеченного в хакерских действиях против армян псевдонима. Некто «Артур Оганян» начал распространять письма среди армян, которые активны в интернете. В письме предлагалось скачать некие компрометирующие Азербайджан материалы, которые были размещен именно на сайте www.xronika.com. При скачивании файл оказывался «трояном», то есть вредоносной программой, которая, оказавшись на чьем-то компьютере, отслеживает все пароли, которые печатает пользователь, и отсылает их злоумышленнику.

Все дело в том, что под псевдонимом «Артур Оганян» скрывается ставший в свое время известным азербайджанский хакер Баджиоглу, которому в прошлом году удалось взломать несколько армянских сайтов. Причем методы его особо не изменились. Во-первых, Баджиоглу опять же рассылал «трояны» под видом компромата против Азербайджана. Во-вторых, он стал известен тем, что сообщал о взломах армянских сайтов, которые на поверку оказывались принадлежащими ему. Кроме того, судя по почерку, этот же хакер в свое время взломал сайт азербайджанского телеканала, разместив на нем безграмотно составленное сообщение от имени спецслужб Армении, после чего последовала атака на армянские ресурсы. Кроме того, он же взламывал сайт Народного фронта Азербайджана под видом армянина.

Вероятнее всего, сайт www.xronika.com контролируется как раз и ЦЭСР, либо эта организация была использована другими структурами в Азербайджане в качестве ширмы для продвижения сайта, через который можно будет сливать дезинформацию, либо работать в направлении дестабилизации армяно-грузинских отношений. В любом случае маловероятно, что через этот сайт действует частное лицо, так как на нем проделывается довольно трудоемкая и рутинная ежедневная работа.

Конечно, азербайджанская сторона, как всегда, использует большие средства в информационной войне, однако больше растрачивает их попусту. В данном случае было неудачно выбрано время для вброса информации: в августе, в период пика отпускного сезона, информационные потоки проходят практически мимо читателей, поэтому, несмотря на усилия практически всей азербайджанской прессы, этот вброс не привел к ожидаемому результату. В армянских интернет-сообществах практически не заметили вышеупомянутый ресурс.

Несмотря на пока что скромные результаты, азербайджанская сторона работает в направлении разворачивания информационной войны. В то время как со стороны Армении не предпринимается никаких скоординированных шагов ни в плане наступления на информационном фронте, ни даже противодействия азербайджанским атакам. Более того, в Азербайджане этими вопросами занимаются на официальном уровне, в то время как в Армении этому направлению не уделяется практически никакого внимания.

Так, на днях депутат парламента Азербайджана Ганира Пашаева заявила: «Большинство доменов, связанных с Азербайджаном, захвачены армянами, что является угрозой информационной безопасности нашего государства». По ее словам, государство должно активно заняться этим вопросом: «В первую очередь, мы должны срочно вернуть свои домены. Во-вторых, нужно поручить это дело госструктуре. В-третьих, нам необходимо зарегистрировать новые домены, связанные с географическими названиями, историческими ценностями Азербайджана».

По словам Пашаевой, «этот вопрос является стратегическим для нас. Так как в глобальном мире, где интернет является неотъемлемой частью жизни, информационная война ведется именно в этом виртуальном мире. Подобное положение дел носит в себе угрозу нашей информационной безопасности, и мы должны отвести ее». Она предлагает выкупить те домены, которые связаны с Азербайджаном и принадлежат коммерческим структурам. А в остальных случаях Пашаева намерена инициировать жалобы в организацию *ICANN* (занимается глобальной регистрацией доменов).

Конечно, через *ICANN* вряд ли возможно отобрать домены, так как домены с такими географическими названиями, как *azerbaijan, karabakh, fizuli, lachin* (именно подобные домены контролируются армянами), не являются защищенными коммерческими брендами. Однако налицо попытка на государственном уровне поднять этот вопрос. В то же время все эти домены, о которых идет речь, контролируются армянами отнюдь не из-за агрессивной политики Еревана, а в связи с частными инициативами армян из Армении и Диаспоры.

Самвел Мартиросян

ԻՆՏԵՐՆԵՏՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Ինտերնետում տարեցտարի ավելանում են ԼՂ թեմային նվիրված՝ հակահայ բովանդակությամբ կայքէջերը, որոնք պատրաստվում են գերազանցապես Ադրբեջանում, ինչպես նաև արտասահմանյան պետություններում բնակվող ադրբեջանական համայնքների կողմից: Ցեղասպանության մերժողականության, ԱՍԱԼԱ-ի գործողությունների, ՀՀ պատմության խեղաթյուրման և հակահայ ուղղվածության այլ թեմաներով կայքէջեր են պատրաստվում նաև Թուրքիայի նախաձեռնությամբ, սակայն ներկա պահի դրությամբ Բաքուն իր ակտիվությամբ գերազանցում է «ավագ եղբորը»:

Մասնավորապես, արցախյան հարցում ադրբեջանա-թուրքական կայքերի առատությունն ակնհայտորեն տեսնելու համար բավական է ինտերնետի որոնման համակարգերում *(www.google.com, www.yandex.ru* և այլն) հավաքել «*Karabagh»* կամ *«Garabagh»,* և որոնման համակարգը կներկայացնի ավելի շատ ադրբեջանա-թուրքական, քան հայկական տեղեկատվական հանգույցներ: Եթե փոխարենը որոնման համակարգում զետեղենք *«Artshakh»,* ապա միանշանակ կգերակշռեն հայկական կայքէջերը, սակայն պետք է հաշվի առնել, որ միջազգային հանրությանը «Արցախ» տարբերակը գրեթե անհայտ է, և թեմային ծանոթանալու համար արտասահմանի բնակիչը կառաջնորդվի իրեն հայտնի «Ղարաբաղ», «Լեռնային Ղարաբաղ» կապակցություններով: Այսպիսով, քարոզչական առումով Ադրբեջանը և Թուրքիան շոշափելի աշխատանք են կատարել, հասել են հաջողությունների, որոնք որոշ չափով փոխել են վիճակը տեղեկատվական պատերազմում և, ըստ էության, միշտ չէ, որ հանդիպում են հայկական կողմի հակազդեցությանը:

www.irevan-az.com - Նշված կայքէջը ադրբեջանական կողմի ակտիվացման ամենացցուն վկայություններից է: Այն հայերեն լեզվով ադրբեջանական սայթ է, որտեղ Բաքուն տեղակայում է քարոզչական բնույթի նյութեր, լուրեր և ապատեղեկատվություն, վերլուծականներ, պատմական ակնարկներ, աուդիոձայնագրություններ, լուսանկարներ և նույնիսկ հայկական թեմաներով ծաղրանկարներ: Կայքում առկա են Ղարաբաղյան պատերազմի և Խոջալիի դեպքերի թեմաներով բաժիններ, ֆոտոարխիվ: Տեղակայված են Արցախի «անվտանգության գոտու» լուսանկարները, Աղդամի ներկայիս տեսքի, Ղուբաթլիի լքված բնակավայրերի պատկերներ: *Անհասկանալի է մնում նաև, թե ինչպես է ադրբեջանական կողմը կարողանում ձեռք բերել ԼՂՀ անվտանգության գոտու, այսինքն՝ ռազմականացված և ճակատային գծին հարող շրջանների մեր օրերի լուսանկարները:*

Նշենք նաև, որ վերոնշյալ կայքէջն ունի բավական բարձրորակ և գրագետ հայերեն շարադրանք: Լեզվական խոտան, սայթաքումներ ու տառասխալներ թեև կան, բայց դրանք շատ չեն: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ բուն հայկական կայքէջերը ևս առանձնապես անթերի չեն: Պետք է ենթադրել, որ կայքէջի պատրաստման վրա աշխատում են նախկին հայաստանաբնակ ադրբեջանցիներ, որոնք տիրապետում են հայերենին: Հնարավոր է նաև առավել «հոռետեսական» տարբերակ՝ հայ մասնագետների հավաքագրման վերաբերյալ, ինչը թեև քիչ հավանական է, բայց տեսականորեն բացառված չէ: Կայքէջը միանշանակ պատրաստված է ադրբեջանական «պետպատվերով»:

Հայկական կողմը ադրբեջաներեն որևէ քարոզչական կայք չունի: Որքան հայտնի է, գործում են թուրքերեն տարբերակներ՝ «Ազգ» օրաթերթի թուրքերեն բաժինը և *www.ermeni.org* թուրքալեզու կայքը:

Պետք է նշել, որ հայերեն լեզվով կայքը քարոզչական առումով մեծ արդյունքների հանգեցնել չի կարող, քանի որ Բաքուն հայ ընթերցողին սեփական մոտեցումները վերանայելուն մղելու նվազագույն հնարավորություններ ունի: Այս պարագայում առավել կարևորն այն փաստն է, որ Ադրբեջանում կարող են աշխատել այդպես «լայն ճակատով», բացել ոչ միայն

ռուսերեն, անգլերեն կամ ֆրանսերեն, այլ նաև հայերեն կայք: Սայթն առաջին հերթին «հոգեբանական գրոհի» և ոչ թե քարոզչության էֆեկտ ունի: Հակառակորդ կողմն ակնհայտորեն ակտիվ աշխատանք է ծավալել:

Դեկտեմբերին գործարկվել է նաև կայքի ռուսերեն տարբերակը:

www.iravan.com կայքը ներկայացնում է «տվյալներ» ներկայիս Հայաստանի՝ պատմական ադրբեջանական տարածք լինելու մասին: Առանձին ներկայացված են Հայաստանի այն տեղանունները, որոնք ունեն ադրբեջանա-թուրքական ծագում և հայացվել են՝ Համամլու (Սպիտակ), Չոմբուրուք (Ճամբարակ), Աղբուլաղ (Լուսաղբյուր), Նոր Բայազետ (Գավառ), Ջալալօղլի (Ստեփանավան) և այլն: Նշված են հանրագիտարանի տեղեկություններն այս քաղաքների և բնակավայրերի հիմնադրման, բնակչության թվի աճի, տեղանունների փոփոխության տարեթվերի մասին: Նորություն է նաև այն, որ կայքում տեղակայված է Արարատ լեռան պատկերը՝ որպես Արևելյան Հայաստանի հանդեպ ադրբեջանցիների «նոստալգիայի» խորհրդանիշ:

www.karabakh.gen.az-ը կենտրոնացել է «ադրբեջանցիների ցեղասպանության», Խոջալիի, «հայկական ահաբեկչության» և Ղարաբաղյան պատերազմի թեմաների շուրջ: Կայքում պրոֆեսոր Իսմայիլ Վելիևը ծավալուն հրապարակմամբ դատապարտում է ՀՅԴ գործունեությունը և նրա քաղաքական գիծը: Ադիլ Բաղիրովը նշում է, թե Ղարաբաղյան բանակի ուժի մասին տեղեկությունները կեղծիք են, որ կազմակերպել են հայերի կողմից վճարված լրագրողները՝ այս համատեքստում հիշելով նաև ռուսական *ՀՏԲ* հեռուստաալիքի տեսաֆիլմը ԼՂՀ ՊԲ թեմայով: Նույն կայքում ադրբեջանական կեղծիքների շարքում ներկայացված են ՀՀ-ում, մասնավորապես՝ «Զանգեզուրում և անվտանգության գոտու տարածքում ադրբեջանական հուշարձանների ոչնչացման մասին» կեղծ տեղեկություններ:

www.karabakh.co.uk կայքը հիմնադրվել է «Լոնդոնի ադրբեջանական համայնք» կազմակերպության, մասնավորապես՝ կառույցի անդամներ Թալե և Նիժաթ Հեյդարովների կողմից: Այն ևս ունի պատմական ակնարկի, լուսանկարների, աուդիոձայնագրությունների, տեղեկությունների և վերջինիս խառնված ապատեղեկատվության բաժիններ: Այս կայքում անդրադարձ է կատարվում նաև ԼՂ անվանի ադրբեջանցի մշակութային, ռազմական գործիչներին: Ծնունդով արցախցի ադրբեջանցի ռազմական գործիչների ցանկը սահմանափակվում է 5 անուններով, որոնցից 3-ը ուշ միջնադարի ժամանակաշրջանից են, իսկ 2-ը խորհրդային գործիչներ են՝ գնդապետ Ասլան Վեզիրովը և գեներալ Խալիլ Մամեդովը: Այս առումով ԼՂ հայազգի միայն մարշալների թիվը գերազանցում է ադրբեջանցի բարձրաստիճան զորականների հանրագումարը:

www.human.az կայքը պատրաստված է պատերազմի գերիների և անհետ կորածների պետական հանձնաժողովի կողմից: Տեխնիկական առումով կայքը բավական բարձր որակի է, բացի տեղեկատվական մասից այն ներկայացնում է նաև մուլտիմեդիա ձևաչափով հոլովակներ, երաժշտություն, կլիպներ: Բովանդակային առումով կրկնում է նախորդ սայթերը: Գործում է բաժին «հայկական ահաբեկչության» թեմայով, ներկայացվում են ՄԱԿ որոշումները ԼՂ հակամարտության վերաբերյալ, մեջ է բերվում Հ.Ալիևի հրամանը մարտի 31-ը «ադրբեջանցիների ցեղասպանության օր» նշելու վերաբերյալ և այլն:

http://www.khocaly.s5.com կայքը, բացի վերոնշյալ բաժիններից, անդրադառնում է նաև Ռամիլ Սաֆարովի անձին, նա ներկայացվում է դրական շեշտադրումներով: Առանձին ներկայացված են ներկայումս ԼՂՀ ՊԲ կողմից վերահսկվող տարածքների նախապատերազմական շրջանի լուսանկարները, «1918-20թթ. հայերի կողմից իրականացված ադրբեջանցի ժողովրդի ցեղասպանության պատմությունը»: «Ադրբեջանի Հանրապետության 20%-ը շարունակում է գտնվել հայկական օկուպացիայի տակ: Ոչինչ և ոչ ոք չի մոռացվել, այս հողը կանչում է միակ իրական հայրենասեր սերնդին՝ մեզ»,- նշված է կայքում:

Խոջալիի «ցեղասպանության» թեմայով է նաև *www.khojaly.net* կայքը: Տեղակայված են լուսանկարներ, փաստաթղթեր, վկայություններ և այլն: *http://azerigenocide.org* կայքն անդրադառնում է «Խոջալիի ցեղասպանությանը» և «ադրբեջանցի ազգի դեմ ցեղասպանական այլ գործողություններին»:

http://aliyevheritage.org կայքն օնլայն գրադարան է, որտեղ զետեղված է էլեկտրոնային տեղեկատվություն Հեյդար Ալիևի գործունեության մասին, ներկայացված են նրա ելույթները, հայտարարությունները: Հիմնադրվել է 2004թ. մայիսի 10-ին: Կայքէջն ունի 26(!) լեզուներով բաժիններ: «Էլեկտրոն քիթափխանա»յում զետեղված են Հեյդար Ալիևի ելույթները ԼՂ հակամարտության վերաբերյալ՝ ժամանակագրական կարգով՝ 1993-ից մինչև 2002թթ.:

www.youtube.com կայքում ներկայացված են ԼՂ թեմայով 2 տեսահոլովակ, որոնցից մեկում հնչում է ադրբեջանական երաժշտություն, մյուսում պատկերված են իբր թե ռուս վարձկաններ, որոնք պատերազմել են ԼՂ-ում՝ հայկական ուժերի կողմից:

Հակահայ բովանդակությամբ ադրբեջանական կայքէջերն այսքանով չեն սահմանափակվում. *http://karabakh-doc.azerall.info, http://www.tallarmeniantale.com, http://www.war-culture.az, http://conflict.aznet.org, http://www.azerbaijanfoundation.org, http://www.human.gov.az, http://www.azeri.ws, http://www.axtar.az, http://www.azeribook.com, http://shusha.aznet.org* սայթերն ադրբեջանական քարոզչական հարձակման դեռևս ոչ լիարժեք թվարկումն են: Այս առումով նպատակահարմար են թվում ՀՀ տեղեկատվական անվտանգության ռազմավարության հստակեցումը, «հակահարվածների» մեխանիզմների մշակումը:

Հայկարամ Նահապետյան

КОНЦЕПЦИЯ СЕТЕЦЕНТРИЧНЫХ ВОЙН КАК РЕВОЛЮЦИЯ В ВОЕННОМ ДЕЛЕ

Общий процесс стремительного развития современных информационных технологий в мире особенно ощутим в сфере военных разработок. Практически все новые информационные технологии проходят свою первичную апробацию на предмет их возможного использования в военном деле. В последнее время военные эксперты говорят уже не просто о реформах в вооруженных силах, диктуемых развитием информационных технологий, а о настоящей информационной революции, набирающей свои обороты. Современные информационные технологии, в своей «революционно-технологической» составляющей, диктуют новый облик будущих войн. Одним из проявлений такой революционности стала концепция сетецентричных войн (*NCW – Net Centric Warfare*). Эта инновационная концепция войн нового образца, которая разработана и внедряется вооруженными силами США. Концепция *NCW* опирается на применение в управлении войсками в боевых операциях компьютеризованной, автоматизированной и централизованной сети систем наблюдения, разведки, связи, боевого управления, интегрированной в единую командно-управленческую систему (*C4 ISR – Command, Control, Communications, Computers, Intelligence, Surveillance and Reconnaissance*). Эта многофункциональная система боевого управления оснащается разветвленной сетью боевых постов управления в штабах, командно-управленческих пунктах, в разведывательно-информационных структурах, в войсках, на боевых платформах оружия.

По своему глубинному существу и содержанию это действительно революционный принцип ведения будущих войн любого уровня и масштабов на принципиально новой основе управления в ходе войны всей военной (оборонной) организацией государства, вооруженными силами на пространстве войны, группировками действующих и резервных войск (сил и боевых средств) на отдельных направлениях и фронтах войны.

Основа сетецентричного ведения и управления войной формируется заблаговременным созданием и развертыванием на ТВД (театре военных действий) разветвленных автоматизированных электронных (компьютеризированных) сетей разведки, информации и управления, которые совокупными усилиями создают единое информационно-управленческое поле, охватывающее все пространство войны. Электронные сети сопрягаются и связываются в единый информационно-управленческий комплекс, обеспечивающий непрерывное оперативное управление (командование) силами по вертикали и горизонтали на пространстве войны. Совокупными усилиями всех элементов комплекс создает единое информационно-управленческое пространство, непрерывно поддерживаемое, обновляемое информацией снизу и сверху, доступное для всех уровней оперативно-боевого управления по вертикали и горизонтали, защищенное от воздействия противника.

Так, концепция сетецентричной войны в своей воздушно-космической составляющей предполагает объединение соответствующих родов войск, а также спутников военного назначения в единую электронную систему для постоянного обмена информацией. При такой организации, например, бомбардировщики смогут получать координаты целей и фотографии местности по электронной почте, командиры подразделений будут всегда обеспечены данными что называется в режиме *on-line* о действиях войск, а командный состав в любой момент времени увидит реальную боевую картину. Кроме того, сетецентричная война подразумевает активное внедрение беспилотных самолетов-разведчиков, поставляющих информацию о вражеских территориях. Концепция *Net Centric Warfare* должна обеспечить возможность наносить после разведки ракетные удары с больших расстояний и практически без потерь времени[1].

---

[1] Например, американская компания *Boeing* наращивает разработки соответствующих технологий. Компания намерена оснащать все свои будущие модели истребителей, вертолетов, бомбардировщиков и другой техники специальным оборудованием для подключения к централизованной информационной сети.

Концепция направлена на достижение и удержание подавляющего информационно-управленческого превосходства над противником, инициативы действий сил в своих руках, достижение необходимых военных и политических целей с минимальными потерями. Превосходство над противником достигается за счет качества оперативного управления – полноты, глубины, оперативности знания, единого понимания и оценки динамично развивающейся обстановки командованием всех уровней, за счет быстроты реагирования на изменяющуюся ситуацию принятием своевременных обоснованных решений и ускоренного доведения их до действующих сил для реализации[1].

Свою последнюю проверку в интенсивных военных действиях концепция сетецентричных войн прошла в Ираке, во время проведения операции «Свободный Ирак» в 2003г.[2] В качестве еще одного практического образца задействования высоких информационных технологий США в боевых условиях американские эксперты также приводят пример военной операции НАТО в Югославии в 1999г.: «США все больше становятся единственной страной в мире, обладающей многими из средств, определяющих успех операции. Например, операция НАТО по прекращению этнических чисток в Косово в 1999г. в большой степени зависела от США в области средств высокоточного поражения целей, наблюдения, дозаправки в воздухе, перебросок войск, а также высокотехнологичных средств управления войсками»[3].

Можно сказать, что иракская военная кампания 2003г. в своей наиболее интенсивной фазе военных действий с обеих сторон была ярким воплощением именно задействования асимметричной составляющей сетецентричных войн. Наряду с непосредственным применением высоких информационных технологий во время военных действий, с американской стороны были задействованы средства и методы асимметричного свойства. В ходе бомбардировки Багдада 26 марта 2003г. прошла боевые испытания электромагнитная бомба (Е-бомба), после применения которой было парализовано иракское телевидение, а в последующие дни была сброшена 2000-килограмовая авиабомба *GBU-37GPS-Aidad Munilion*. «Финансовым оружием» (взятки командному составу иракской армии) были выведены из активных действий около половины командующих армейскими округами и республиканской гвардии Ирака. На подкуп генералов Саддама Хусейна американцы затратили до $10 млн, в результате три из семи иракских корпусов не принимали активного участия в боевых действиях[4].

Если рассматривать концепцию *NCW* более широко и с позиций их перспективной применимости, то можно расширить ее рамки до определенной совокупности теорий, касающихся революции в военном деле (и сетецентричные, и информационные противоборства; информационные войны, включающие обработку населения электронными СМИ, выведение систем управления компьютеров тыловых и гражданских объектов; и тому подобное). Все эти концепции – продукт коллективного разума теоретиков США и Европы о войнах нового типа на основе *IT* в военном строительстве и применении их в боевых условиях.

Сам процесс внедрения этих технологий и есть та самая «революция в военном деле», которая уже свершилась в США, и этот процесс уже воспроизводит сам себя[5].

В целом тематика *Net Centric Warfare* пока открыта для обсуждения в США, существуют университеты, выставки, конференции, премии компаниям за лучшие решения в *IT* для военных[6].

---

[1] *Александр Горшков.* В вооруженных силах США происходит не просто реформа, а революция, http://nvo.ng.ru/concepts/2005-04-01/4_usa.html.

[2] См. Приложение.

[3] *Джеймс Аппатурай.* Ликвидируя разрыв в потенциале (NATO Review), http://www.hq.nato.int/docu/review/2002/issue3/russian/art1.html.

[4] *Анатолий Цыганок*, Заскорузлые концепции обрекают на поражение, http://nvo.ng.ru/forces/2006-04-07/1_conception.html.

[5] *Александр Московский*, Новый сегмент мирового рынка оружия - Рынок военного программного обеспечения (ВПО). Системы защиты в автоматизированных системах военного назначения *MIT (Military Information Technologies)*, http://www.pwgs.org/rus/pub10r.htm *(Promexport World Group Systems).*

[6] Так, в 2005г. премии *Net Centric Warfare Awards 2005* в сфере производства информационных систем защиты и обработки информации в военных сетях и системах ВС США получили американские компании *Cisco Systems, Raytheon, Northman Grumman, General Dynamics*.

В соответствии с докладом министерства обороны США «Четырехлетний оборонный обзор» от 6 февраля 2006г. перед Стратегическим командованием США (*US STRATCOM*) был поставлен ряд новых задач. В сфере информации министерство возложило на стратегическое командование ответственность за глобальные сетевые операции[1]. Из конкретных направлений деятельности министерства обороны США в сфере развития сетевых операций в докладе, в частности, указываются: 1) снятие в 2007 финансовом году с вооружения передвижного сводного командного центра стратегического командования и, начиная с указанного года, финансирование новой распределенной наземной системы связи для обеспечения надежного и выживаемого командования и управления ядерными силами; 2) дополнительные инвестиции в средства защиты информационных и компьютерных сетей министерства; 3) укрепление координации наступательных и оборонных кибероперацій министерства; 4) улучшение обмена информацией между министерством и другими ведомствами и с международными союзниками и партнерами путем разработки политики защиты информации и применения новейших коммерческих технологий; 5) смещение акцентов с усилий в каждом роде войск на сетецентричный подход, охватывающий все министерство, в том числе на расширение распределенной общей наземной сети[2].

Вместе с тем, как и любая другая концептуальная теория, концепция сетецентричных войн содержит определенные слабые стороны. По мнению некоторых экспертов, обилие всевозможной информации в боевых условиях может привести к путанице и неразберихе, в результате чего эффективность командования только снизится. Кроме того, потребуется обеспечить достаточную пропускную способность каналов связи и их безопасность.

В настоящее время концепция сетецентричных войн прошла свою первичную апробацию в наиболее мощных вооруженных силах мира – ВС США. Другие страны, которые могут себе позволить на данном этапе большие инвестиции в перспективную разработку концепции *NCW* и ее апробацию к специфике своих вооруженных сил (например, Россия), все чаще начинают говорить о необходимости непосредственного задействования передовых технологий сетецентричности в войсках. Реализация концепции требует больших финансовых вложений. Могут ли малые страны хотя бы в отдаленной перспективе приступить к апробациям концепции сетецентричности в своих вооруженных силах? Единственный пример на сегодняшний день – это Израиль, но здесь играет свою решающую роль огромная военная помощь еврейскому государству со стороны США, которая с 2008г. составит $3 млрд в годовом исчислении. Любое территориально малое государство, находящееся при этом в плотном окружении, как минимум, недружественных стран и ограниченное в своих людских ресурсах, будет вынужденно рано или поздно обратиться к тематике концепции сетецентричных войн для эффективного обеспечения своей национальной безопасности. В будущих новых или «размороженных» региональных конфликтах применение, например, одного из перспективных направлений концепции сетецентричных войн – информационно-управляющие системы в комплексе с радиоэлектронным подавлением и средствами поражения – может привести к упреждающему уничтожению командных пунктов и пунктов связи противника, пунктов управления ПВО и авиации, других средств и сил управления войсками. В результате вооруженные силы противника будут обезглавлены и обречены на неминуемый разгром. Таким образом, информационно-управляющее оружие выходит на первый план как средство, которое способно в условиях региональных войн обеспечивать решающее превосходство над противником, подобным оружием не обладающим.

Михаил Агаджанян

---

[1] В штате министерства обороны США предусмотрена должность помощника министра обороны по сетевой и информационной интеграции. Он же является руководителем информационной службы министерства.

[2] Доклад о «Четырехлетнем оборонном обзоре» 2006г., http://www.marshallcenter.org/site-graphic/lang-ru/page-mc-index-1/xdocs/opa/policy-docs/static/xdocs/opa/static/QDR_2006-RU.pdf

Информационно-управляющие системы, использованные США во время операции «Свободный Ирак», 2003г.

Система боевого управления – TBMCS (Theater Battle Management Core Systems)

Система служит в качестве ключевой точки, интегрированную в более широкую систему Объединенного командования и контроля ведения войны в воздухе – *Joint air warfare command and control* (C2). В свою очередь Система *TBMCS* интегрирует в себя подсистемы сбора разведданных, анализа, планирования и использования информации в едином, общем, взаимосвязанном, безопасном режиме на основе компьютеризированной web-технологии. Система дает пользователям информацию «в реальном времени», в режиме «качественного принятия решений». Такая информация, кроме командного состава, поступает пилотам, диспетчерам и офицерам контроля за оружием, для синхронизации их действий в боевых условиях использования авиации. Возможности Системы по более детальному обнаружению целей и более детальному планированию полетов авиации позволяют достигать поставленных целей с меньшим привлечением авиации (например, 1/3 от числа самолетов, необходимых в бою без использования Системы) и за меньшее время.

Во время иракской кампании в 2003г. Система, в частности, эффективно выполняла задачу синхронизации вылетов палубной и армейской авиации.

Распределенная система боевого управления – FBCB2 (Force XXI Battle Command Brigade or Below)

Обеспечивала постоянный доступ к оперативной и тактической информации без использования в тактическом и оперативном звене карт. Данные от космической группировки, самолетов-разведчиков, беспилотных разведывательных летательных аппаратов поступали командирам подразделений, танков, БМП, БТР (даже отдельным военнослужащим, действовавшим автономно) постоянно. Все командиры боевых подразделений имели мобильные компьютеры в особо прочном блоке марки *Tallahosse Technologics Inc* (500 МГц/4 Гбайт/ Windows 95/NT).

Система отслеживания - MTS (Army Movement Tracking System)

Система предусмотрена для обеспечения контроля за перемещением наземной боевой техники и синхронизации ее действий в любом месте и в любое время суток.

Во время иракской кампании 2003г. компьютеры штаба армейского корпуса были способны отслеживать до 1000 единиц боевой техники и наземных целей в час. В системе было задействовано более 4 тыс. бортовых компьютеров и 100 серверов, для доступа к которым пользователи имели личный пароль.

В настоящее время разработана усовершенствованная версия Системы – MTS+, позволяющая осуществлять функции контроля и синхронизации вне зависимости от места операций и времени суток.

Тыловая транспортная система – TCRCCES (Transportation Command Regulationg and Command and Control Evacuation System)

Обеспечивала информацию о состоянии здоровья личного состава, перемещении раненых и больных.

Сведения на 100% личного состава коалиционной группировки были занесены в базу данных. Офицеры медслужбы на поле боя использовали портативные спутниковые станции, ноутбуки и диагностическое оборудование, поэтому раненые и больные поступали с диагнозом и рентгеновскими снимками.

«ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՍԱՆԴՂԱԿ»
(CONFLICT BAROMETER)

Միջազգային հակամարտությունների հետազոտությունների Հեյդելբերգի ինստիտուտը (այսուհետ՝ ՄՀՀՀԻ) գործում է Հեյդելբերգի համալսարանի քաղաքագիտության բաժանմունքի ենթակայության ներքո *(University of Heidelberg- http://www.uni-heidelberg.de/research)*: Այն մասնավոր կազմակերպություն է, որի գործունեությունը կենտրոնանում է ազգային, միջազգային քաղաքական հակամարտությունների կամ հիմնախնդիրների փաստագրման և վերլուծությունների շուրջ: ՄՀՀՀԻ-ն հիմնադրվել է 1991թ.՝ նպատակ հետապնդելով շարունակել Հեյդելբերգի համալսարանի պրոֆեսոր Ռ.Պֆեթչի գլխավորած *«COSIMO/Conflict Simulation Model/»* հետազոտական նախագծի աշխատանքները: Վերոնշյալ նախագիծը մասամբ ֆինանսավորվում էր հայտնի «Գերմանական հետազոտությունների հիմնադրամ»-ի *(German Research Foundation- http://www.dfg.de/en/)* կողմից[1]: ՄՀՀՀԻ-ն շարունակաբար հետազոտություններ է իրականացնում այս ուղղությամբ, որոնց արդյունքները հրատարակվում են հայտնի *«Conflict barometer/*Հակամարտությունների սանդղակ» կոչվող տարեկան հաշվետվություններում: «Հակամարտությունների սանդղակ» տարեկան հաշվետվություններում նկարագրվում են գլոբալ հակամարտությունների, առկա լարվածության զարգացման միտումները:

Մեթոդաբանական խնդիրներ

ՄՀՀՀԻ-ն հակամարտությունների ուսումնասիրման մեթոդաբանության հիմքում դնում է հակամարտության և պատերազմի որակական սահմանումը, որտեղ տոկոսային համեմատաբար ցածր լարվածությամբ կամ ինտենսիվությամբ պատերազմներն ու հակամարտությունները որակվում են իրականացված բռնությունների, այլ ոչ թե մահացության դեպքերի թվաքանակով: Այս մեթոդաբանությունը հաստատում է, որ եթե նույնիսկ հակամարտությունների զարգացման մեջ պատմական փոփոխություններ են տեղի ունեցել, այնուհանդերձ, հակամարտությունը շարունակում է զարգանալ: Հարկ է նշել նաև, որ, նախորդ տարիների կտրվածքով միջազգային հակամարտությունների նկատմամբ մեթոդաբանական մոտեցումները զգալի փոփոխություն են կրել: Ներկայումս փորձագետների ուշադրության կենտրոնում է գտնվում ոչ այնքան ներպետական, ինչպես նախկինում էր, որքան պետությունների և այլ միջազգային սուբյեկտների միջև ծագած հակամարտությունների ուսումնասիրությունը: Արդյունքում՝ վերաձևակերպվել են նաև ՄՀՀՀԻ մեթոդաբանական ընկալումները:

ՄՀՀՀԻ հակամարտության ուղղությամբ իրականացվող հետազոտությունների մեթոդաբանությունը, ըստ կազմակերպության տեղեկատվության, ժամանակագրական առումով բաժանվում է երկու մասի՝ մինչև 2002թ. և 2003թ. սկսած: Մինչև 2002թ. կազմակերպության

---

[1] *«COSIMO/Conflict Simulation Model/»* հետազոտական նախագիծը նախաձեռնվել է 1945թ., իսկ Գերմանական հետազոտությունների հիմնադրամի (ԳՀՀ) կողմից ֆինանսական միջոցներ ստացել է 1988-1991թթ. ընկած ժամանակահատվածում: ԳՀՀ-ն ֆինանսավորում և իրականացնում է գիտական, գիտահետազոտական աշխատանքներ գիտության ու հասարակագիտության գրեթե բոլոր ոլորտներում: Հիմնադրամի կարգավիճակը ենթադրում է գիտության և հետազոտական աշխատանքների ոլորտներում խորհրդատվական գործառնությունների իրականացում երկրի դաշնային խորհրդարանների ու պետական իշխանությունների համար: Նշենք, որ 2005/2006թթ. ԳՀՀ-ին ֆինանսավորող ընդհանուր միջոցները կազմել են €1.351 մլրդ, որի 58%-ը ֆինանսավորել է Գերմանիայի դաշնային կառավարությունը, 41.6%-ը՝ դաշնային հանրապետությունները: ԳՀՀ ներկայացուցչությունները գործում են Պեկինում (2000թ.), Վաշինգտոնում (2002թ.), Մոսկվայում (2003թ.) և Դելիում (2006թ. նոյեմբեր)՝ երկկողմ գիտահետազոտական հիմնադրամների ու կազմակերպությունների, անհատ գիտնականների միջև կապերի հաստատման ու համագործակցության նպատակներով:

մեթոդաբանական մոտեցումներում «Հակամարտության սանդղակը» տարբերակվում է երկու կատեգորիաներով՝ հակամարտություն բռնություններով և հակամարտություն առանց բռնությունների: Ուսումնասիրության օբյեկտ կարող է հանդիսանալ նաև այն հակամարտությունը, որտեղ դադարել են բռնությունները, սակայն հետևողական մոնիթորինգի անհրաժեշտություն է նկատվում: Մինչև 2002թ. մեթոդաբանությունում հակամարտությունների ինտենսիվության աստիճանը ներկայացվում է հետևյալ 4 կատեգորիաներով՝

- լատենտային հակամարտություններ (ամբողջությամբ առանց բռնությունների)
- ճգնաժամեր (գերակշիռ մասով՝ առանց բռնությունների)
- սուր ճգնաժամեր (բռնությունների ժամանակ առ ժամանակ, անկանոն կիրառում)
- պատերազմներ (բռնությունների կանոնավոր և հավաքական բռնությունների ու կանոնավոր զորքերի կիրառում):

Նկատենք նաև, որ նախկին մեթոդաբանական մոտեցումներում «հակամարտություն» տերմինը սահմանվում էր որպես շահերի (տարբեր դիրքորոշումների) բախումներ՝ պայմանավորված ազգային արժեքներով (անկախություն, ինքնորոշում, սահմաններ և տարածք): 2003թ. սկսած՝ «հակամարտություն» տերմինի սահմանները ստացել են առավել լայն կիրառություն: Հակամարտությունը շահերի (տարբեր դիրքորոշումների) բախում է ներկայացնում՝ կապված ազգային արժեքների հետ (տարածք, անջատողականություն, ապագաղութացում, ինքնավարություն, համակարգ/գաղափարախոսություն, պետական հեղաշրջում, ազգային ուժ, տարածաշրջանային գերիշխանություն, միջազգային ուժ, ռեսուրսներ և այլն): Նոր մեթոդաբանության համաձայն՝ հակամարտության ինտենսիվության աստիճանը բաժանվում է ոչ թե 4, այլ 5 կատեգորիաների, ինչը խոսում է կազմակերպության մեթոդաբանական մոտեցումներում հակամարտության որակական գնահատականների ու վարկանիշների խստացման մասին, այն է՝

1. լատենտային հակամարտություն (առանց բռնությունների հակամարտություն)
2. նկատելի (մանիֆեստային) հակամարտություն (առանց բռնությունների հակամարտություն)
3. ճգնաժամ (հակամարտություն բռնություններով)
4. սուր ճգնաժամ (հակամարտություն բռնություններով)
5. պատերազմ (հակամարտություն բռնություններով):

Հակամարտությունների զարգացման միտումների շուրջ

«Հակամարտության սանդղակ» հաշվետվություններում փաստավիճակագրական տեղեկատվություն է ներկայացվում համաշխարհային հակամարտությունների վերաբերյալ, որը թույլ է տալիս ոչ միայն ընդհանուր պատկերացումներ, այլև որոշակի եզրահանգումներ կատարել դրանց գլոբալ և մասնակի դեպքերի դինամիկայի ու հեռանկարների վերաբերյալ: Այսպես, 1997թ. հաշվետվությունում 1993-1997թթ. բռնություններով ուղեկցվող հակամարտությունների ընդհանուր թվաքանակը, 80-90-ականների սկզբներին կտրուկ աճման համեմատ, զգալիորեն նվազել է: Եվ սա՝ այն պարագայում, երբ հակամարտությունների քանակը սույն ժամանակաշրջանում աստիճանական աճ է արձանագրել: Բռնություններով հակամարտությունների մեծ մասը բաժին է ընկել Մերձավոր Արևելքին (8 հակամարտություն բռնություններով), Աֆրիկայում և Ասիայում՝ 7-ական, իսկ Եվրոպայում՝ 2: 1997թ. սկսած՝ նկատվում է հակամարտությունների կայուն աճման միտում: Մասնավորապես, եթե 1997թ. դրությամբ համաշխարհային հակամարտությունների թվաքանակը հաշվվել է 124, ապա արդեն 2002թ.՝ 173, որոնցից 42-ն ուղեկցվել է բռնություններով (13 պատերազմական և 29 սուր ճգնաժամային ելքերով): 2004թ. գլոբալ հակամարտությունների թվաքանակը կրկին ավելացել է 2003թ. համեմատ (218-ից դառնալով 230): Հաջորդ՝ 2005-2006թթ. դրանց թվաքանակը կազմել է համապատասխանաբար 249 և 278:

1997թ., 2001-2006թթ. հակամարտությունների զարգացման դինամիկան

Կատեգորիա	1997[1]	2001	2002	2003	2004	2005	2006
Պատերազմ	27	12	13	14	3	2	6
Սուր ճգնաժամ		30	29	21	33	22	29
Ճգնաժամ	97	64	52	45	51	74	83
Մանիֆեստ. հակամ.		70	79	63	66	86	100
Լատենտ. հակամարտ.				75	77	65	60
Ընդհանուր	**124**	**176**	**173**	**218**	**230**	**249**	**278**

Հարավկովկասյան հակամարտությունների առանձնահատկությունների շուրջ

Աշխարհագրական մասնատում

«Հակամարտությունների սանդղակ» հաշվետվություններում հարավկովկասյան հակամարտությունների առանձնահատկություններից մեկը վերաբերում է դրանց աշխարհագրական տեղաբաշխման մեթոդաբանությանը: Այսպես, 1997թ. և 2002թ. հաշվետվություններում Ղարաբաղյան հակամարտությունը ներկայացված է «Մերձավոր և Միջին Արևելք» ենթաբաժնի «Կենտրոնական Ասիա» խորագրի ներքո[2]: Այն դեպքում, երբ Չեչնիայի, վրաց-աբխազական, վրաց-հարավօսական կամ վրաց-աջարական հակամարտություններն ընդգրկված էին «Եվրոպա» բաժնում: Աշխարհագրական տեղաբաշխվածության այդ տրամաբանությունը խախտվում է, մասնավորապես, 2003թ. և հաջորդ տարեկան հաշվետվություններում, երբ Ղարաբաղյան հիմնախնդիրը, ի թիվս վրաց-աբխազական, վրաց-հարավօսական կամ Չեչնիայի հակամարտությունների, ընդգրկվում է «Եվրոպա» տարածաշրջանում:

Ինտենսիվության աստիճանավորում

Հարավային Կովկասում առկա հակամարտությունների վիճակագրական լուսաբանման հարցում հարկ է անդրադառնալ նաև դրանց ինտենսիվության կամ աստիճանական դինամիկայի համեմատականների վերլուծությանը:

Ղարաբաղ

Ինստիտուտի երեք՝ 1997, 2002, 2003թթ. տարեկան հաշվետվություններում Ղարաբաղյան հիմնախնդիրն առանձնացել է հակամարտության ինտենսիվության լավագույն ցուցանիշներով (լատենտային հակամարտություն): Իսկ հաջորդ՝ 2004թ. հաշվետվությունում հակամարտության ինտենսիվության դինամիկան որոշակի աճ է արձանագրել՝ դասվելով երկրորդ՝ «մանիֆեստային հակամարտություն» կատեգորիային: Ինտենսիվության աճման միտումը պահպանվում է թե՛ 2005 և թե՛ 2006թթ., երբ Ղարաբաղյան հիմնախնդիրը հինգ սանդղականոց աստիճանակարգում դասվում է բավական բարձր դիրքում՝ «ճգնաժամ» կատեգորիայում: Սակայն այն տարբերությամբ, որ եթե 2005թ. դրությամբ հակամարտության ցուցիչն արձանագրել է աճման միտում, ապա 2006թ. ցուցիչում հակամարտության ինտենսիվության ընդհանուր դինամիկան մնացել է անփոփոխ:

Հաշվետվություններում Հայաստանին վերաբերող հիմնախնդիրների կամ անկայուն իրավիճակների շարքում առանձնացված է «Թուրքիա-Հայաստան. ցեղասպանություն» ենթախորագիրը: Նշենք, որ վերջինիս կոնֆլիկտային իրավիճակի ինտենսիվությունը, 2004թ. ներառյալ, արձանագրել է զրոյական ցուցանիշ, իսկ 2005-2006թթ. ունեցել աճման միտում՝ դասվելով «մանիֆեստային հակամարտություն» կատեգորիային (2005թ. աճել է, իսկ 2006թ. մնացել անփոփոխ):

---

[1] 1997թ. հաշվետվության մեթոդաբանությունում հակամարտություն կատեգորիան որակվում է հակամարտություն բռնություններով և հակամարտություն առանց բռնությունների եզրերով: Այն է՝ հակամարտություններից 27-ն ուղեկցվել է բռնություններով, 97-ը դիտարկվում է որպես հակամարտություն առանց բռնության:

[2] Նույն ենթաբաժնում առանձնացված է նաև Թուրքիա-քրդեր (PKK) հակամարտությունը:

Վրաց-աբխազական, հարավօսական և աջարական հիմնախնդիրներ

Ի տարբերություն Ղարաբաղյան հիմնախնդրի, վրաց-աբխազական հակամարտության դինամիկան առանձնանում է ինտենսիվության համեմատաբար բարձր ցուցանիշներով: Այսպես, 1997թ. վրաց-աբխազական հակամարտությունը դասվում է ոչ թե առաջին, այլ երկրորդ՝ «հիմնականում առանց բռնությունների ճգնաժամ» կատեգորիային: 2002-2006թթ. ամփոփ հաշվետվություններում աբխազական հակամարտությունը, որպես կանոն, վերագրվել է «ճգնաժամ» կատեգորիային: Սակայն նշված ժամանակաշրջանում, ի տարբերություն 2003թ. վիճակագրության, որտեղ հակամարտության ցուցիչն աճման միտում է ունեցել, մնացած բոլոր տարեկան զեկույցներում այն անփոփոխ է եղել:

Ինստիտուտի ներկայացրած տարեկան հաշվետվություններում վրաց-հարավօսական և աջարական հակամարտություններն ունեցել են ինտենսիվության կամ զարգացման գրեթե նույնանման ցուցանիշներ: 1997թ. դրանք, ինչպես աբխազական հակամարտությունը, վերագրվել են «հիմնականում առանց բռնությունների ճգնաճամ» կատեգորիային: 2002-2003թթ. այդ հակամարտությունների ինտենսիվության աստիճանը բնութագրվում է որպես «լատենտային հակամարտություն»: Իսկ արդեն 2004թ. երկու հակամարտությունների ինտենսիվության աստիճանը կտրուկ աճ է արձանագրում («ճգնաժամ»): 2005-2006թթ. վրաց-հարավօսական հակամարտությունը պահպանում է ինտենսիվության «ճգնաժամ» կատեգորիան:

Վրաստան. անկայունության այլ օջախներ

Հաշվետվություններում՝ որպես հակամարտության կամ անկայունության օջախ, առանձնացվում էր նաև «Վրաստան. պետական հեղաշրջում» խորագիրը: Նշված ժամանակահատվածում ինստիտուտի տարեկան հաշվետվություններում Վրաստանում հեղաշրջման հավանականությունը դիտարկվել է միայն 2003թ. («մանիֆեստային հակամարտություն»)՝ պայմանավորված նոյեմբերյան իշխանափոխությանը նախորդող զարգացումներով: Հաշվետվություններում առանձին տեղ է հատկացվում նաև «Ռուսաստան-Վրաստան. միջազգային ուժ» հակամարտությանը, որի ինտենսիվության ամենաբացասական ցուցանիշը՝ «սուր ճգնաժամ աճման ցուցիչով», արձանագրվել է 2002թ.: 2003թ. ի վեր այդ հակամարտության ինտենսիվության աստիճանը կանոնավոր նվազման միտում է ունեցել: Այսպես, եթե 2003-2004թթ. այն վերագրվել է «ճգնաժամ» կատեգորիային (կրկին պայմանավորված նոյեմբերյան հեղաշրջմամբ), ապա 2005-2006թթ.՝ «մանիֆեստային հակամարտություն» կատեգորիային:

Վրաստանում առկա ներքին հիմնախնդիրներին առնչվելիս անհրաժեշտաբար պետք է առանձնացնել նաև երկրի ազգային փոքրամասնությունների՝ հայերի ու ադրբեջանցիների հիմնահարցը, որը և տեղ է գտել «Հակամարտությունների սանդղակ» հաշվետվություններում՝ «Վրաստան/հայ. փոքրամասնություն-ինքնավարություն» և «Վրաստան/ադրբեջ. փոքրամասնություն-ինքնավարություն» խորագրերի ներքո: Սույն ժամանակահատվածում Վրաստանում թվարկված երկու ազգային փոքրամասնությունների իրադրության ինտենսիվության աստիճանն ունեցել է զարգացման նույն դինամիկան: Այսպես, 1997-2005թթ. ընթացքում տեղաբնակ հայերի ու ադրբեջանցիների հետ կապված կոնֆլիկտային իրավիճակը որպես այդպիսին բացակայում է: 2006թ. ազգային երկու փոքրամասնությունների մոտ էլ արձանագրվում է կոնֆլիկտային իրադրության զարգացման միտում՝ դասվելով «մանիֆեստային հակամարտություն», անփոփոխ ցուցիչ կատեգորիային:

Անվանումների և կատեգորիաների փոխակերպում. Հարավային Կովկաս

Համաձայն ինստիտուտի ներկայացրած տարեկան հաշվետվությունների՝ վրաց-աբխազական հակամարտությունը մինչև 2003թ. ներառյալ ներկայացված է որպես *էթնիկական և տարածքային ինքնավարություն*: 2004-2006թթ. հաշվետվություններում հակամարտությունն արդեն ներկայացվում է որպես *անջատողական*: Իսկ վրաց-հարավօսական հակամարտությունը վերը նշված բոլոր տարեկան հաշվետվություններում ներկայացվում է որպես միմիայն *անջատողական:* 2006թ. տարեկան հաշվետվությունում առանձնացված են նաև Վրաստանի ազգային փոքրամասնություններին՝ հայերին ու ադրբեջանցիներին վերաբերող կետեր (նա-

խորդ հաշվետվություններում դրանք բացակայում են)։ Երկու դեպքում էլ խնդրին տրվում է *ինքնավարություն* սահմանումը։

Հաշվետվություններում «Ղարաբաղյան հիմնախնդիր» սահմանման փոխարեն կիրառվում է միայն «Հայաստան-Ադրբեջան» հակամարտություն բնորոշիչը։ Գրեթե բոլոր հաշվետվություններում, բացառությամբ 2006թ., Ղարաբաղյան հակամարտությունը ներկայացվում է որպես *տարածքային* հիմնախնդիր։ 2006թ. հակամարտությանը տրվում է *անջատողական-տարածքային* բնորոշիչը։ Նշենք նաև, որ ամփոփ հաշվետվություններում Ղարաբաղյան հակամարտությունը ներկայացվում է որպես հիմնախնդիր երկու միջազգային սուբյեկտների միջև և կրում է, ինչպես արդեն ասվեց, «Հայաստան-Ադրբեջան» հակամարտություն սահմանումը։ Ի տարբերություն Ղարաբաղյան հիմնախնդրի, թե՛ վրաց-աբխազական, թե՛ վրաց-հարավօսական հակամարտությունները դիտարկվում կամ ձևակերպվում են որպես Վրաստանի ներքին հիմնախնդիրներ (վերջիններս համապատասխանաբար ներկայացված են *Վրաստան (Աբխազիա), Վրաստան (Հարավային Օսիա) կամ Վրաստան (Աջարիա)* խորագրերով։

Կարեն Վերանյան
«Նորավանք» հիմնադրամ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԱՍՊԱՐԵԶ

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումն առանցքային տեղ են զբաղեցնում ԱՄՆ հայ համայնքի գործունեության նպատակների մեջ: Ամերիկահայությունը մինչ օրս շեշտը դրել է լոբբիստական գործունեության վրա և հասել է որոշակի արդյունքների: Մասնավորապես, երկու անգամ՝ 2000 և 2007թթ., ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովն ընդունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև: 2000թ. միայն ամերիկյան գործադիր իշխանության և, մասնավորապես, նախագահ Բիլ Քլինթոնի ակտիվ միջամտության արդյունքում Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից ընդունված Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը չընդգրկվեց Ներկայացուցիչների պալատի օրակարգում՝ այդպիսով ճանաչում չստանալով վերջինիս կողմից: Նման միտում նկատվում է նաև 2007թ. Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից ընդունված 106-րդ բանաձևի պարագայում, թեև Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի կողմից բանաձևի ընդունման հույսերը դեռևս վերջնականապես սպառված չեն, քանի որ մեկ տարվա ընթացքում այն կարող է քննարկման դրվել Ներկայացուցիչների պալատում:

Փաստորեն, լոբբիստական գործունեության շնորհիվ ամերիկահայ համայնքը թեև հասել է նշանակալի հաջողությունների, սակայն հարցի վերջնական լուծման համար դեռ շատ ջանքեր են պահանջվում: Վերջին շրջանում նկատվող միտումները կարծես թե ցույց են տալիս, որ ԱՄՆ մեր հայրենակիցները, թերևս, եկել են այն գիտակցության, որ լոբբիստական գործունեությունն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է Միացյալ Նահանգների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործը հաջողելու համար: Ուստի, անհրաժեշտ է այն համադրել նաև այլ ոլորտներում ակտիվ գործողությունների հետ: Կարևորագույն ոլորտներից մեկը, որտեղ փորձում է ակտիվացնել իր ջանքերը ամերիկահայ համայնքը, հասարակական կարծիքի հետ աշխատելու, այն է՝ քարոզչության ասպարեզն է:

Հայ դատի տեսակետից բարենպաստ հասարակական կարծիք ձևավորելու առաջին լուրջ քայլը կարող է լինել Վաշինգտոնում Հայոց ցեղասպանության թանգարանի հիմնադրումը: Ինչպես հաղորդում է Ստամբուլում լույս տեսնող «Նոր Մարմարա» օրաթերթը, 2007թ. նոյեմբերի կեսերին Կալիֆորնիայում տեղի ունեցած Ամերիկայի Հայկական համագումարի հիմնադրման 35-ամյակին նվիրված հանդիսությունների ժամանակ ներկայացվել են մի տեսաերիզ ու մի գրքույկ ապագա թանգարանի ճարտարապետական էսքիզների ու ցուցանմուշների վերաբերյալ: Ըստ ծրագրի՝ թանգարանը պետք է զբաղեցնի 20 հազար մ^2 տարածք և ունենա հետագա ընդլայնման հնարավորություն: Թանգարան-համալիրում պետք է գործեն նաև մարդու իրավունքների ու ցեղասպանության բաժին, հայկական ինքնության վերաբերյալ լրատվական բաժին, վերապրածների թատրոն և այլն: Հայոց ցեղասպանության թանգարանը, ուր ներկայացվելու են բազմաթիվ ցուցանմուշներ, միաժամանակ հանդիսանալու է նաև յուրահատուկ ուսումնական, մշակութային, լրատվական կենտրոն՝ մատչելի գրեթե բոլոր տարիքի անձանց համար:

Վաշինգտոնում Հայոց ցեղասպանության թանգարան-համալիրի հիմնադրման առիթով հետաքրքիր են թվում հետևյալ մի քանի դատողությունները.

- ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնում է կենտրոնացած երկրի քաղաքական և, հատկապես, կառավարող վերնախավը: Հետևաբար, այնտեղ Հայոց ցեղասպանության թանգարանի հիմնադրմամբ կամա թե ակամա քարոզչության թիրախ խումբ է դառնում ամերիկյան քաղաքական էլիտան, ինչն էական նշանակություն ունի վերջինիս կողմից հայերի ցեղասպանության ճանաչման հարցում բարյացակամ դիրքորոշում որդեգրելու տեսակետից:
- Վաշինգտոնը ոչ միայն ԱՄՆ մայրաքաղաքն է, այլև աշխարհի ամենանշանավոր քաղաքներից մեկը, ուր գրեթե միշտ հյուրընկալվում են մարդիկ (այդ թվում նաև զբոսա-

շրջիկներ) ոչ միայն ԱՄՆ-ի, այլ նաև ամբողջ աշխարհի տարբեր անկյուններից: Ուստի, այստեղ հիմնադրվելիք Հայոց ցեղասպանության թանգարան-համալիրի այցելուներ են լինելու ոչ միայն ամերիկացիները, այլև մարդիկ աշխարհի բազմաթիվ այլ շրջաններից: Փաստորեն, այդպիսով հայկական քարոզչությունը ԱՄՆ-ում ստանալու է միջազգային բնույթ, քանի որ այդ քարոզչության համար լսարան է դառնալու ոչ միայն ամերիկյան հասարակությունը, այլև միջազգային հանրությունը:

- Վաշինգտոնում է գտնվում նաև հրեական ցեղասպանության՝ Հոլոքոստի թանգարանը: ԱՄՆ մայրաքաղաքում երկու ցեղասպանություններից (հայկական և հրեական) միայն մեկի ճանաչվածության փաստը կարող է հոգեբանական աններդաշնակություն առաջացնել մարդկանց մեջ, ինչի հաղթահարման ձգտումն էլ, թերևս, կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ Միացյալ Նահանգների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման համար:

Հասարակական կարծիքի հետ աշխատելու հաջորդ կարևոր քայլը ամերիկահայ համայնքի համար, ըստ էության, կլինի Հայ դատի վերաբերյալ կինոարտադրությունը, ինչը, ըստ հայաստանյան և սփյուռքի լրատվամիջոցների, արդեն ընթացքի մեջ է: Ըստ «Նոր Մարմարայի» տեղեկատվության՝ ԱՄՆ հայ համայնքը ձեռնամուխ է եղել Հայոց ցեղասպանությանը նվիրված հոլիվուդյան կինոնկարների շարքի ստեղծմանը, որոնց միջոցով պետք է քարոզվեն Հայ դատի վերաբերյալ հայկական կողմի տեսակետները: Այդ կինոնկարներում նկարահանվելու են աշխարհահռչակ և մեծ ժողովրդականություն վայելող դերասաններ, ինչպիսիք են Մել Գիբսոնը, Անտոնիո Բանդերասը, Սիլվեսթր Սթալոնեն և այլք: Հայոց ցեղասպանությանը նվիրված կինոնկարների շարքի արտադրության համար Լոս Անջելեսում հաստատված հայությունն արդեն հանգանակել է $100 մլն: Հայկական հարցի վերաբերյալ կինոնկարների մեջ առանցքային տեղ է զբաղեցնելու «Մուսա լեռան քառասուն օրը» ֆիլմը, որը նկարահանվելու է ավստրիացի մեծ գրող Ֆրանց Վերֆելի նույնանուն պատմավեպի հիման վրա: Այդպիսի մի ֆիլմ նկարահանվել է նաև նախկինում, սակայն դրա հաջողություններն այնքան էլ մեծ չեն եղել: Նոր ֆիլմում նկարահանվելու է Մել Գիբսոնը, որն, ի դեպ, համակրանք է տածում հայերի նկատմամբ: Նա արդեն տվել է իր համաձայնությունը՝ խաղալ ֆիլմի առանցքային դերերից մեկը: Հոլիվուդում նկարահանվող այս նոր ֆիլմից ակնկալիքներն անհամեմատ մեծ են:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանությանը նվիրված հոլիվուդյան ֆիլմերի թողնելիք արձագանքներին՝ նշենք, որ հոլիվուդյան ֆիլմերը միայն ամերիկյան հասարակության համար չեն արտադրվում: Դրանց լսարանն անհամեմատ ավելի ընդարձակ է և ընդգրկում է ողջ աշխարհը: Հետևաբար, միանգամայն տրամաբանական է ակնկալել, որ Հայ դատին նվիրված ֆիլմերն արձագանք են թողնելու ոչ միայն ամերիկյան, այլև ողջ համաշխարհային հասարակության մեջ[1]:

Ամփոփելով նշենք, որ ամերիկահայ համայնքի գիտակցության մեջ տեղի են ունենում որոշակի փոփոխություններ: ԱՄՆ-ում հաստատված հայությունն ավելի ու ավելի է համոզվում, որ ազգային նպատակներին հասնելու համար, լոբբիստական գործունեությունից զատ, անհրաժեշտ է լուրջ գործողություններ ծավալել նաև բարենպաստ հասարակական կարծիք ձևավորելու ուղղությամբ: Հետևաբար, գործողությունների նոր ասպարեզ է բացվում ամերիկահայ համայնքի համար: Դա քարոզչության բնագավառն է, որտեղ նույնպես սկսում են ներդրվել զգալի ռեսուրսներ:

Վահրամ Հովյան
«Նորավանք» հիմնադրամ

---

[1] Կինոարտադրության միջոցով Թուրքիայի դեմ քարոզչություն ծավալելու գործում հայերն ամենևին էլ միայնակ չեն: Ամերիկահայ համայնքի հետ գրեթե միաժամանակ նման նախաձեռնությամբ են հանդես գալիս նաև Հյուսիսային Իրաքի քրդերը: Իրաք են հրավիրվել շուրջ 30 հոլիվուդյան կինոռեժիսորներ և դերասաններ, այդ թվում նաև Անտոնիո Բանդերասը: Նրանց հետ բանակցությունները ֆիլմեր նկարահանելու վերաբերյալ հաջողվել են: Այդ ֆիլմերում նախատեսվում է ներկայացնել քրդերի կրած տառապանքները հետսադամյան ժամանակաշրջանում: Ամերիկյան հասարակության մեջ քրդերի նկատմամբ համակրանք ստեղծելու նպատակով նկարահանվող ֆիլմերում քրդերը ներկայանալու են որպես ամերիկյան բանակի զինակիցներ, խաղաղասեր ու բարի մարդիկ, որոնք ենթարկվել են բազմաթիվ զրկանքների և վաստակել սեփական անկախ պետությունն ունենալու իրավունքը: